

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ  
ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԻՋԵՎԱՆ – 2017

# Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա Ծրագրի մասնագիրը (սպեցիֆիկացիան)

<b>1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը</b>	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա 61101.02.6
<b>2. Բուհը</b>	Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
<b>3. Ծրագիրը հավատարմագրված է</b>	–
<b>4. Շնորհվող որակավորումը</b>	Ինֆորմատիկայի բակալավր
<b>5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին</b>	2017/2018
<b>6. Ուսումնառության լեզուն</b>	Գրական հայերեն
<b>7. Ուսուցման ձևը</b>	Առկա և հեռակա

## 8. Ծրագրի ընդունելության չափանիշները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության վկայական:

Ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի:

## 9. Ծրագրի նպատակները

Ծրագիրը նպատակ ունի պատրաստել ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի բնագավառի մասնագետներ, որոնք ունակ կլինեն.

1. Կիրառելու համակարգչային տեխնոլոգիաների մեթոդները տարբեր ոլորտներում՝ ներառյալ տեխնիկայի, տնտեսության, նախակոնստրուկտորական և ֆինանսական բնագավառները:

2. Համադրելու հիմնարար և կիրառական մաթեմատիկայի գիտելիքներ տարբեր համակարգերի մոդելավորման, տեղեկատվությունների որոնման, տվյալների բազաների ստեղծման, պահպանման և օգտագործման նպատակով:

3. Ծրագրավորման լեզուների միջոցով մշակելու և կիրառելու տարբեր օբյեկտների և համակարգերի մոդելավորման ծրագրային փաթեթներ:

4. Աշխատելու գիտական և գիտաարդյունաբերական բնագավառներում, տարբեր ոլորտներում հետազոտությունների արդյունքների և գործընթացների արդյունավետության վերլուծություն կատարելու:

### **10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները**

#### **Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն**

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

**Ա1.** Ներկայացնել և բացատրել ծրագրավորման ժամանակակից սկզբունքները, մեթոդները (օբյեկտային կողմնորոշված մեթոդ, համակարգված մեթոդ, տարրային ծրագրավորման մեթոդ, կառուցվածքային մեթոդ), և արդի տեխնոլոգիաները,

**Ա2.** թվարկել ծրագրավորման արդի լեզուները, դասակարգել և ներկայացնել նրանց առանձնահատկությունները, հիմնավորել տարբեր խնդիրների իրականացման ժամանակ կոնկրետ ընտրված լեզվի անհրաժեշտությունը,

**Ա3.** բացատրել զուգահեռ ծրագրավորման, ցանցային ծրագրավորման, web-ծրագրավորման առանձնահատկությունները, ներկայացնել համապատասխան պարզ ծրագրերի օրինակներ,

#### **Դասավանդման/ուսումնառության մեթոդները**

Ուսանողները ձեռք են բերում Ա1-Ա5 կետերում նշված գիտելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով.

- դասախոսություններ և սեմինար պարապմունքներ,
- փոքր խմբերում տարբեր հարցադրումներ և քննարկումներ,
- գործնական պարապմունքներ.
- լաբորատոր աշխատանքներ,
- տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր.

#### **Գնահատման մեթոդները**

Ուսանողների Ա1-Ա5 գիտելիքները և իմացությունը գնահատվում է հետևյալ ձևերով.

- Տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքների ստուգում,
- ստուգարքներ
- ընթացիկ գրավոր և եզրափակիչ քանավոր քննություններ.

<p><b>Ա4.</b> ներկայացնել գիտական և տնտեսական տարբեր ոլորտներում ծրագրային համակարգերի կիրառման սկզբունքները, բացատրել դրանց ներդրման արդյունավետությունը և ստացվող ձեռքբերումները, բերել ծրագրային համակարգերի կիրառման հայտնի օրինակներ,</p> <p><b>Ա5.</b> ներկայացնել հաշվիչ մեքենաների (առանձնապես, սուպերհամակարգիչների) կիրառման ժամանակակից ուղղությունները, մեկնաբանել նրանց կիրառման հնարավորությունները ՀՀ-ում և տարածաշրջանում:</p>	<ul style="list-style-type: none"> <li>▪ իմբային նախագծերի պաշտպանություն,</li> <li>▪ կուրսային, ավարտական աշխատանքի պաշտպանություն:</li> </ul>
--	---

<p><b>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</b></p> <p>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.</p> <p><b>Բ1.</b> Լուծել մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ընթացքում չնախատեսված իրավիճակներում առաջացած խնդիրները՝ օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար առարկաների գաղափարները, սկզբունքները, դրույթները, խնդիրների լուծման եղանակները:</p> <p><b>Բ2.</b> Ցուցաբերել նորարարական ու առաջադեմ մոտեցումներ</p>	<p><b>Դասավանդման/ուսումնառության մեթոդները</b></p> <p>Ուսանողները ձեռք են բերում Բ1-Բ6 կարողությունները հետևյալ մեթոդներով.</p> <p>Բ1 – Բ4, Բ6.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ,</li> <li>▪ լաբորատոր աշխատանքներ,</li> <li>▪ գործնական պարապմունքներ,</li> <li>▪ կուրսային աշխատանքների իրականացում</li> </ul> <p>Բ5.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ կուրսային աշխատանքների</li> </ul>
--	---

<p>առաջացած տնտեսագիտական և բնագիտական բնագավառների խնդիրների մաթեմատիկական մոդելների կառուցման ծրագրային իրականացման համար, ընտրել խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ:</p> <p><b>Բ3.</b> Փոխանակել և ստանալ տեղեկատվություն մասնագետ և ոչ մասնագետ ունկնդիրների հետ, գրավոր ու բանավոր հաղորդակցվել և ստանալ մասնագիտական տեղեկատվություն՝ օգտագործելով հաղորդակցման ժամանակակից տարբեր տեխնոլոգիաներ (skype, e-mail, սոց. ցանցեր և այլն):</p> <p><b>Բ4.</b> Իրականացնել բիզնես խնդիրների արդյունավետ լուծումներ՝ օգտագործելով համակարգչային և ցանցային ճարտարապետության, նրանց տարրային հենքի, օպերացիոն համակարգերի ներքին կառուցվածքի և գրաֆիկական ծրագրավորման ու տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ ստացած գիտելիքները:</p> <p><b>Բ5.</b> Հավաքագրել մասնագիտական տվյալներ տեղեկատվական և համակարգչային ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ պահանջող տարբեր պարզ և բարդ խնդիրների լուծման</p>	<p>իրականացում,</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ արտադրական պրակտիկա</li> </ul> <p><b>Գնահատման մեթոդները</b></p> <p>Ուսանողների Բ1-Բ6 գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.</p> <p>Բ1-Բ4, Բ6.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ Տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքների գնահատում</li> <li>▪ կուրսային նախագծերի պաշտպանություն,</li> <li>▪ ստուգարքներ</li> <li>▪ ընթացիկ գրավոր և եզրափակիչ բանավոր քննություններ,</li> </ul> <p>Բ5.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ Տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքների ստուգում,</li> <li>▪ կուրսային նախագծերի պաշտպանություն</li> <li>▪ ավարտական աշխատանքի պաշտպանություն:</li> </ul>
---	--

<p>համար, իրականացնել հավաքագրված մասնագիտական տվյալների քանակական և որակական վերլուծություններ, կատարել տրամաբանական եզրահանգումներ:</p> <p><b>Բ6.</b> Պլանավորել, նախագծել և կառուցել ծրագրային համակարգեր տեղեկատվական տվյալների հավաքագրում և մշակում պահանջող մասնագիտական խնդիրների համար:</p>	
--	--

<p><b>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</b></p> <p>Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.</p> <p><b>Գ1.</b> Ինքնուրույն կամ ղեկավարի աջակցությամբ նախագծել և իրականացնել համակարգչային ծրագրեր, պատրաստի ծրագրերը թեստավորել, գնահատել, գտնել սխալները, շտկել և զարգացնել:</p> <p><b>Գ2.</b> Ուսումնական կամ աշխատանքային միջավայրում աշխատել որպես թիմի անդամ, ստանձնել պատասխանատվություն համընդհանուր նպատակին հասնելու համար, կառավարել մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, արդարացնել, հետևություններ անել,</p>	<p><b>Դասավանդման/ուսումնառության մեթոդները</b></p> <p>Ուսանողները ձեռք են բերում Գ1-Գ4 ընդհանրական կարողությունները հետևյալ մեթոդներով.</p> <p>Գ1 –Գ3.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ առաջադրանքներ և խմբային նախագծեր,</li> <li>▪ սեմինար պարապմունքներ,</li> <li>▪ գործնական պարապմունքներ,</li> <li>▪ արտադրական պրակտիկա,</li> <li>▪ ավարտական աշխատանքի նախապատրաստում.</li> </ul> <p>Գ2-Գ3.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ օտարալեզու մասնագիտական գրականության ընթերցում</li> <li>▪ համացանցից անհրաժեշտ տեղեկատվության</li> </ul>
--	--

<p>առաջարկել լուծումներ, ինչպես նաև հիմնավորել և պաշտպանել սեփական տեսակետը:</p> <p><b>Գ3.</b> Որոշել իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:</p> <p><b>Գ4.</b> Պահպանել մասնագիտական էթիկայի չափանիշները և տեխնոլոգիական լուծումների նախագծման և մասնագիտական գործունեության ժամանակ սեփական վարքագծով նպաստել համամարդկային արժեքների տարածմանը:</p>	<p>հավաքագրում և դասակարգում</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ բանավոր քննարկումներ, /ներկայացումներ, /</li> <li>▪ ուսումնական սեմինարներ.</li> <li>▪ ռեֆերատների և էսսեների նախապատրաստում,</li> </ul> <p><b>Գ4.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>▪ դասախոսություններ,</li> <li>▪ սեմինար պարապմունքներ</li> <li>▪ արտադրական պրակտիկա:</li> </ul> <p><b>Գնահատման մեթոդները</b> Ուսանողների Գ1-Գ4 ընդհանրական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով. Գ1-Գ4.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ Տնային, ինքնուրույն աշխատանքների ստուգում,</li> <li>▪ խմբային նախագծերի պաշտպանություն</li> <li>▪ ռեֆերատների պատրաստում և զեկուցում,</li> <li>▪ անհատական առաջադրանքների կատարման ստուգում, ավարտական աշխատանքի պաշտպանություն:</li> </ul>
---	---

<b>11. Ծրագրի կառուցվածքը</b>
<b>11.1. Ծրագրի ընդհանուր կառուցվածքի նկարագրությունը</b>
<p>Բակալավրի ծրագիրը բաղկացած է 4 հիմնական կրթամասերից՝ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (36 կրեդիտ աշխատաձևավալով), մաթեմատիկական և բնագիտական, (6 կրեդիտ աշխատաձևավալով) ընդհանուր մասնագիտական դասընթացներ (174 կրեդիտ աշխատաձևավալով), ինչպես նաև այլ կրթական մոդուլներ (24 կրեդիտ աշխատաձևավալով):</p>

**1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս**

*Պարտադիր դասընթացներ (36 կրեդիտ)*

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթացներ, որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

*Կամրնտրական դասընթացներ (4 կրեդիտ)*

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երեքը:

**2. Ընդհանուր մաթեմատիկական և հումանիտար կրթամաս**

*Պարտադիր դասընթացներ (6 կրեդիտ)*

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մոդուլ դասընթացներ, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

**3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս (174 կրեդիտ)**

Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը (174 կրեդիտ):

**4. Կրթական այլ մոդուլներ**

*Կուրսային աշխատանք (4 կրեդիտ)*

Նախատեսվում է 2-ական կրեդիտ աշխատանքավարով 2 կուրսային աշխատանքների կատարում (4 կրեդիտ):

*Արտադրական պրակտիկա (4 կրեդիտ)*

Ապահովում է մաթեմատիկայի և ինֆորմատիկայի դասավանդման խնդիրների ընկալումը, մանկավարժական ունակությունների զարգացմանը. կարող է իրականացվել ՀՀ ԿԳՆ ավագ, հիմնական և միջին դպրոցներում:

*Ամփոփիչ ավարտական քննություն (4 կրեդիտ)*

*Ավարտական աշխատանք (12 կրեդիտ)*

Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է ամփոփ հետազոտություն ներկայացնել բակալավրի ավարտական աշխատանքի թեմայի շրջանակում:



**11.2. Ուստարիներ և ուսումնական մոդուլներ**

1-ին ուստարի /1-2 կիսամյակներ/

ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՄԸՆՏ ԸՄԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՍՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ
<p><b><i>Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս</i></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• 0302/ B01. Հայոց լեզու և գրականություն -1 (2 կրեդիտ)</li> <li>• 0305/ B02. Ռուսաց լեզու -1 (4 կրեդիտ)</li> </ul> <p>0304/ B03. Հայոց պատմության հիմնահարցեր-1 (2 կրեդիտ)</p> <ul style="list-style-type: none"> <li>• 0001/B04. Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ)</li> <li>• 0305/B05. Անգլերեն լեզու -1 (4 կրեդիտ)</li> <li>• 0302/ B06. Հայոց լեզու և գրականություն -2 (2 կրեդիտ)</li> <li>• 0305/ B07. Ռուսաց լեզու -2 (4 կրեդիտ)</li> <li>• 0304/ B08. Հայոց պատմության հիմնահարցեր-2 (2 կրեդիտ)</li> <li>• 0001/B09. Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ)</li> <li>• 0305/B10. Անգլերեն լեզու -2 (4 կրեդիտ)</li> <li>• 0304/B11. Փիլիսոփայության հիմունքներ (4 կրեդիտ)</li> <li>• 0001/B12. Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ)</li> <li>• 0001/B13. Ֆիզդաստիարակություն (0 կրեդիտ)</li> </ul>		<p>Առնվազն 60 կրեդիտի կուտակում:</p>

<p><b><i>Մաթեմատիկական և քնագիտական կրթամաս</i></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• 0105/ B17. Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ (2 կրեդիտ)</li> <li>• 0001/B18. Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն ( 4 կրեդիտ)</li> </ul> <p><b><i>Ընդհանուր մասնագիտական կրթամաս</i></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• 0105/ B19. Մաթեմատիկական անալիզ -1 (6 կրեդիտ)</li> <li>• 0105/B20. Հանրահաշիվ և երկրաչափություն (4 կրեդիտ)</li> <li>• 0104/ B21. Դիսկրետ մաթեմատիկա-1 (4 կրեդիտ)</li> <li>• 0104/B22. ԷՀՄ և ծրագրավորում-1 (4 կրեդիտ)</li> <li>• 0104/ B23. Դիսկրետ մաթեմատիկա-2 (5կրեդիտ)</li> <li>• 0104/B24. ԷՀՄ և ծրագրավորում - 2 (5կրեդիտ)</li> <li>• 0105/ B25. Մաթեմատիկական անալիզ -2 (6 կրեդիտ)</li> </ul>		
--	--	--

**Ուստարիներ և ուսումնական մոդուլներ**

2-րդ ուստարի /3-4 կիսամյակներ/

ՊԱՐՏԱԴԻՐ	ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ	ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ
<ul style="list-style-type: none"> <li>• 0105/ B26. Հանրա-հաշիվ (5 կրեդիտ)</li> <li>• 0104/ B27. ԷՀՄ ճարտարապետություն և ասեմբլեր լեզու (4 կրեդիտ)</li> <li>• 0104/ B28. Տվյալների կառուցվածքներ (4 կրեդիտ)</li> <li>• 0105/ B29. Մաթեմատիկական անալիզ-3 (5 կրեդիտ)</li> <li>• 0105/ B30. Ֆիզիկա (4 կրեդիտ)</li> <li>• 0104/ B31. GUI ծրագրավորում (4 կրեդիտ)</li> <li>• 0105/ B32. Կոմպլեքս անալիզ (6 կրեդիտ)</li> <li>• 0105/B33. Ռադիոէլեկտրոնիկա (4 կրեդիտ)</li> <li>• 0104/ B34. Ալգորիթմների տեսություն (4 կրեդիտ)</li> <li>• 0104/ B35. Օպերացիոն համակարգեր (6կրեդիտ)</li> <li>•</li> </ul>	<p><b>Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս</b></p> <p><b>Կամընտրական առարկաներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• 0305/B14. Անգլերեն լեզու - 3 (4 կրեդիտ)</li> <li>• 0305/ B14. Ռուսաց լեզու -3 (4 կրեդիտ)</li> <li><b>Կամընտրական առարկաներ</b></li> <li>• 0304/ B15. Իրավագիտություն (2 կրեդիտ)</li> <li>• 0201/B15.Տնտեսագիտություն (2 կրեդիտ)</li> <li>• 0304/B15. Քաղաքագիտություն (2 կրեդիտ)</li> <li><b>Կամընտրական առարկաներ</b></li> <li>• 0304/B16. Կրոնների պատմություն (2 կրեդիտ)</li> <li>0202/B16. Մշակու-</li> </ul>	<p>Առնվազն 60 կրեդիտի կուտակում:</p>

	թաբանություն(2 կրեդիտ)	
--	------------------------	--

<b>Ուստարիներ և ուսումնական մոդուլներ</b>		
3-րդ ուստարի /5-6 կիսամյակներ/		
<b>ՊԱՐՏԱԴԻՐ</b>	<b>ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ</b>	<b>ԱՌԱՋԱԴԻՄՈՒ-ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ</b>
<p><b><i>Մաթեմատիկական և բնագիտական կրթամաս</i></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• 0001/ B02. Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն (4 կրեդիտ)</li> <li>• <b><i>Ընդհանուր մասնագիտական կրթամաս</i></b></li> <li>• 0104/ B36. Գրաֆների տեսություն (2կրեդիտ)</li> <li>• 0104/ B37. մաթեմատիկական մոդելավորում և թվային մեթոդներ և (7 կրեդիտ)</li> <li>• 0105/ B38. Դիֆերենցիալ հավասարումներ (6 կրեդիտ)</li> <li>• 0105/ B39. Ֆունկցիոնալ անալիզ (4 կրեդիտ)</li> <li>• 0105/B40. Կիսահաղորդչային սարքերի ֆիզիկա (6 կրեդիտ)</li> <li>• 0105/B41. Հավանականություն</li> </ul>	<p><b>Կամընտրական առարկաներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• 0104/ B54. Զուգահեռ ծրագրավորում (5 կրեդիտ)</li> <li>• 0105/ B54. Ֆունկցիոնալ անալիզի կիրառություններ (5 կրեդիտ)</li> </ul>	<p>Առնվազն 60 կրեդիտի կուտակում:</p>

<p>յունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն (6 կրեդիտ)</p> <ul style="list-style-type: none"> <li>• 0104/ B42. Տվյալների հենքեր (5 կրեդիտ)</li> <li>• 0105/ B43. Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ (5 կրեդիտ)</li> <li>• 0104 B44. Գործույթների հետազոտում (6 կրեդիտ)</li> </ul> <p><b>Կրթական այլ մոդուլներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Արտադրական պրակտիկա (4 կրեդիտ)</li> <li>• Կուրսային աշխատանք-1 (2 կրեդիտ)</li> </ul>		
--	--	--

<b>Ուստարիներ և ուսումնական մոդուլներ</b>		
4-րդ ուստարի /7-8 կիսամյակներ/		
<b>ՊԱՐՏԱԴԻՐ</b>	<b>ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ</b>	<b>ԱՌԱՋԱԴԻՍՈՒ ԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ</b>
<p><b>Ընդհանուր մասնագիտական կրթամաս</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• 0104/B45. Կոմբինատոր ալգորիթմներ և վերլուծություն (5 կրեդիտ)</li> <li>• 0104/ B46. Թարգմանության տեսություն (5 կրեդիտ)</li> <li>• 0105/ B47. Մաթեմատիկական տրամաբանություն (4 կրեդիտ)</li> <li>• 0104/ B48.</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• 0104/ B55. C# ծրագրավորման լեզու (4 կրեդիտ)</li> <li>• 0105/ B55. Ֆինանսական մաթեմատիկայի հիմունքներ (4 կրեդիտ)</li> </ul>	<p>Առնվազն 240 կրեդիտի կուտակում</p> <p>Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորում և ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն</p>

<p>Մաթեմատիկական կիբեռնետիկայի տարրեր (6 կրեդիտ)</p> <ul style="list-style-type: none"> <li>• 0104/ B49. Web ծրագրավորում (3 կրեդիտ)</li> <li>• 0104/B50. Կրիպտոգրաֆիայի մաթեմատիկական մեթոդներ (4 կրեդիտ)</li> <li>• 0104/ B51. Օպտիմիզացիայի մեթոդներ (4 կրեդիտ)</li> <li>• 0104/ B52. Համակարգիչների տարրային հենքի ֆիզիկա (4 կրեդիտ)</li> <li>• 0104/ B53. Կոմպյուտերային ցանցեր (3 կրեդիտ)</li> </ul> <p><b><i>Կրթական այլ մոդուլներ</i></b></p> <ul style="list-style-type: none"> <li>• 0104/ B01. Կուրսային աշխատանք -2 (2 կրեդիտ)</li> <li>• 0104/ B04. Ամփոփիչ ավարտական քննություն (4 կրեդիտ)</li> <li>• 0104/ B05. Ավարտական աշխատանք (12 կրեդիտ)</li> </ul>		15,00
--	--	-------

**11. 2 Արտադրական պրակտիկայի հնարավորությունները և պայմանները**

Արտադրական պրակտիկական կազմակերպվում է պրակտիկայի ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ԵՊՀ ԻՄ համակարգչային սրահներում, ծրագրավորման հիմնարկ-ձեռնարկություններում:

<b>11.3. Ավարտական ատեստավորումներ</b>	
<b>Ուստարի</b>	<b>Անվանումը</b>
4-րդ ուստարի	Ամփոփիչ ավարտական քննություն Բակալավրի ավարտական աշխատանքի պաշտպանություն

<b>12. Ուսումնական պլանի քարտեզը</b>
Կցված է

<b>13. Տեղեկատվություն գնահատման կարգի վերաբերյալ</b>
Տե՛ս «ԵՊՀ-ԻՄ կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք», Երևան, 2011 թ., էջ 14-20:

<b>14. Ապագա կարիերայի հնարավորությունները</b>
<p>«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել տեղեկատվական տեխնոլոգիաների բազմաբնույթ ոլորտներում գործող պետական և մասնավոր հիմնարկներում, կազմակերպություններում և ձեռնարկություններում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ Գիտահետազոտական ինստիտուտներում՝ <ul style="list-style-type: none"> <li>▪ լաբորանտ,</li> <li>▪ ծրագրավորող,</li> <li>▪ կրտսեր գիտաշխատող,</li> </ul> </li> <li>▪ Պետական և մասնավոր հիմնարկներում՝ <ul style="list-style-type: none"> <li>▪ տեղեկատվական բազաներ ստեղծող մասնագետ,</li> <li>▪ արդյունքների վիճակագրական վերլուծությունների մասնագետ,</li> <li>▪ ծրագրավորող,</li> <li>▪ արտադրանքի վերահսկման բաժինների ծրագրային մասնագետ:</li> </ul> </li> </ul> <p>Լրացուցիչ մանկավարժական դասընթացներ անցնելուց հետո ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել նաև ՀՀ ԿԳՆ ավագ, հիմնական և միջին դպրոցներում որպես ուսուցիչ:</p> <p>Հնարավոր աշխատավայրերն են. ՀՀ ԿԳՆ դպրոցներ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ, ինչպես նաև տեղեկատվական</p>

տեխնոլոգիաների ոլորտում գործող բազմաբնույթ ձեռնարկություններ:  
Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը մագիստրատուրայում:

**15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ և ձևեր (եթե կան)**

Ուսումնառության գործընթացում օգտագործվում են հետևյալ օժանդակ ռեսուրսները.

- Ժամանակակից էլեկտրոնային սարքավորումներով և ծրագրային միջոցներով ապահովված լաբորատորիաներ,
- գրականության էլեկտրոնային և տպագիր ռեսուրսներ:

**16. Համապատասխան կրթական չափորոշիչները կամ առարկայական կողմնորոշիչ(ներ)ը**

- Պետական կրթական չափորոշիչ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությամբ.
- ՀՀ կրթական որակավորումների ազգային շրջանակ.

**17. Ծրագրային այլ կողմնորոշիչներ**

- Recommendations. European Parliament Council. Recommendation of the European Parliament and the Council of 23 April 2008 on the establishment of the European Qualifications framework for lifelong learning (Text with EEA relevance) (2008/C 111/01);
- The framework of qualifications for the European Higher Education Area, 2010,
- Դուբլինյան նկարագրիչներ,



**Ծրագրի կրթական վերջնարդյունքները**

**Ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.**

<b>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն</b>		<b>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</b>	
Ա1	Ներկայացնել և բացատրել ծրագրավորման ժամանակակից սկզբունքները, մեթոդները (օբյեկտային կողմնորոշված մեթոդ, համակարգված մեթոդ, տարրային ծրագրավորման մեթոդ, կառուցվածքային մեթոդ), և արդի տեխնոլոգիաները:	Գ1	Ինքնուրույն կամ ղեկավարի աջակցությամբ նախագծել և իրականացնել համակարգչային ծրագրեր, պատրաստի ծրագրերը թեստավորել, գնահատել, գտնել սխալները, շտկել և զարգացնել:
Ա2	Թվարկել ծրագրավորման արդի լեզուները, դասակարգել և ներկայացնել նրանց առանձնահատկությունները, հիմնավորել տարբեր խնդիրների իրականացման ժամանակ կոնկրետ ընտրված լեզվի անհրաժեշտությունը:	Գ2	Ուսումնական կամ աշխատանքային միջավայրում աշխատել որպես թիմի անդամ, ստանձնել պատասխանատվություն համընդհանուր նպատակին հասնելու համար, կառավարել մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, արդարացնել, հետևություններ անել, առաջարկել լուծումներ, ինչպես նաև հիմնավորել և պաշտպանել սեփական տեսակետը:
Ա3	Բացատրել զուգահեռ ծրագրավորման, ցանցային ծրագրավորման, web-ծրագրավորման առանձնահատկությունները, ներկայացնել համապատասխան պարզ ծրագրերի օրինակներ,	Գ3	Որոշել իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:

Ա4	Ներկայացնել գիտական և տնտեսական տարբեր ոլորտներում ծրագրային համակարգերի կիրառման սկզբունքները, բացատրել դրանց ներդրման արդյունավետությունը և ստացվող ձեռքբերումները, բերել ծրագրային համակարգերի կիրառման հայտնի օրինակներ:	Գ4	Պահպանել մասնագիտական էթիկայի չափանիշները և տեխնոլոգիական լուծումների նախագծման և մասնագիտական գործունեության ժամանակ սեփական վարքագծով նպաստել համամարդկային արժեքների տարածմանը:
Ա5	Ներկայացնել հաշվիչ մեքենաների (առանձնապես, սուպերհամակարգիչների) կիրառման ժամանակակից ուղղությունները, մեկնաբանել նրանց կիրառման հնարավորությունները ՀՀ-ում և տարածաշրջանում:		
<b>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</b>			
Բ1	Լուծել մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ընթացքում չնախատեսված իրավիճակներում առաջացած խնդիրները՝ օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար առարկաների գաղափարները, սկզբունքները, դրույթները, խնդիրների լուծման եղանակները:	Բ4	Իրականացնել բիզնես խնդիրների արդյունավետ լուծումներ՝ օգտագործելով համակարգչային և ցանցային ճարտարապետության, նրանց տարրային հենքի, օպերացիոն համակարգերի ներքին կառուցվածքի և գրաֆիկական ծրագրավորման ու տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ ստացած գիտելիքները:

Բ2	Ցուցաբերել նորարարական ու առաջադեմ մոտեցումներ առաջացած տնտեսագիտական և բնագիտական բնագավառների խնդիրների մաթեմատիկական մոդելների կառուցման ծրագրային իրականացման համար, ընտրել խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ:	Բ5	Հավաքագրել մասնագիտական տվյալներ տեղեկատվական և համակարգչային ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ պահանջող տարբեր պարզ և բարդ խնդիրների լուծման համար, իրականացնել հավաքագրված մասնագիտական տվյալների քանակական և որակական վերլուծություններ, կատարել տրամաբանական եզրահանգումներ:
Բ3	Փոխանակել և ստանալ տեղեկատվություն մասնագետ և ոչ մասնագետ ունկնդիրների հետ, գրավոր ու բանավոր հաղորդակցվել և ստանալ մասնագիտական տեղեկատվություն՝ օգտագործելով հաղորդակցման ժամանակակից տարբեր տեխնոլոգիաներ (skype, e-mail, unq. ցանցեր և այլն):	Բ6	Պլանավորել, նախագծել և կառուցել ծրագրային համակարգեր տեղեկատվական տվյալների հավաքագրում և մշակում պահանջող մասնագիտական խնդիրների համար:

Ծրագրի կրթական վերջնարդյունքները														
Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4
Ուստարին, որի ավարտին կրթական վերջնարդյունքը ձեռք է բերվում բոլոր ուսանողների կողմից:														

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի կրեդիտը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները															
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Բ1	Բ2	Բ3	Բ4	Բ5	Բ6	Գ1	Գ2	Գ3	Գ4	
Հայոց լեզու և գրականություն-1	2									x					x		x
Ռուսաց լեզու-1	4									x					x		x
Հայոց պատմության հիմնահարցեր-1	2														x		x
Ֆիզդաստիարակություն	0																
Անգլերեն -1	4														x		x
Հայոց լեզու և գրականություն-2	2									x					x		x
Ռուսաց լեզու -2	4									x					x		
Հայոց պատմության հիմնահարցեր-2	2														x		x
Ֆիզդաստիարակություն	0																
Անգլերեն -2	4									x					x		
Էթիկա և վարվեցողության հիմունքներ	0									x				x			x

Փիլիսոփայության հիմունքներ	4													x		x	x
Ֆիզդաստիարակություն	0																
Ֆիզդաստիարակություն	0																
<b>Կամրնոտրական առարկաներ</b>																	
Անգլերեն -3	4							x		x				x			
Ռուսաց լեզու-3								x		x				x			
<b>Կամրտրական առարկաներ</b>																	
Իրավագիտություն	2							x						x			
Տնտեսագիտություն								x		x	x						
Քաղաքագիտություն								x			x				x		
<b>Կամրտրական առարկաներ</b>																	
Կրոնների պատմություն	2								x						x		x
Մշակութաբանություն									x						x		
<b>ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ</b>																	
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2							x						x	x		
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնություն	2																x

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ															
Մաթեմատիկական անալիզ-1	6					x	x								x
Հանրահաշիվ և երկրաչափություն	4					x	x								x
Դիսկրետ մաթեմատիկա-1	4					x	x			x					x
ԷՀՄ և ծրագրավորում - 1	4	x	x				x		x			x			x
Դիսկրետ մաթեմատիկա-2	5					x	x		x	x					x
ԷՀՄ և ծրագրավորում - 2	5	x	x				x		x		x	x			x
Մաթեմատիկական անալիզ-2	6					x	x								
Հանրահաշիվ	5					x	x								
ԷՀՄ ճարտարապետություն և ասեմբլեր լեզու	4	x	x			x			x		x	x			x
Տվյալների կառուցվածքներ	4	x	x			x	x		x	x	x	x			x
Մաթեմատիկական անալիզ-3	5					x	x								
Ֆիզիկա	4				x		x		x	x					
GUI ծրագրավորում	4	x	x	x					x	x	x	x			x
Կոմպլեքս անալիզ	6					x									
Ռադիոէլեկտրոնիկա	4				x		x		x						x
Ալգորիթմների տեսություն	4	x	x				x				x	x			x
Օպերացիոն համակարգեր	6	x		x		x			x		x	x			x
Գրաֆների տեսություն	2						x	x			x				x

Մաթեմատիկական մոդելավորում և թվային մեթոդներ	7						x	x			x	x	x		x	
Դիֆերենցիալ հավասարումներ	6						x	x					x		x	
Ֆունկցիոնալ անալիզ	4															
Կիսահաղորդչային սարքերի ֆիզիկա	6									x					x	
Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն	6		x	x	x	x	x	x				x	x			
Տվյալների հենքեր	5	x	x							x		x			x	
Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ	5				x											
Գործույթների հետազոտում	6				x			x			x	x	x		x	
Կոմբինատոր ալգորիթմներ և վերլուծություն	5				x		x	x			x				x	
Թարգմանության տեսություն	5	x	x		x		x									
Մաթեմատիկական տրամաբանություն	4	x					x				x			x	x	
Մաթեմատիկական կիրառելի տարրեր	6						x	x							x	
Web ծրագրավորում	3	x	x	x				x			x	x			x	
Կրիպտոգրաֆիայի մաթեմատիկական մեթոդներ	4	x		x	x						x	x			x	

Օպտիմիզացիայի մեթոդներ	4						x	x			x		x		x	
Համակարգիչների տարրային հենքի ֆիզիկա	4					x				x					x	
Կոմպյուտերային ցանցեր	3	x		x		x				x	x				x	
<b>Կամրնտրական առարկաներ</b>																
Զուգահեռ ծրագրավորում	5	x	x	x		x		x			x	x	x		x	
Ֆունկցիոնալ անալիզի կիրառություններ							x								x	
C# ծրագրավորման լեզու	4	x	x	x		x		x			x	x	x		x	
Ֆինանսական մաթեմատիկայի հիմունքներ		x			x		x			x	x				x	
<b>ԱՅԼ ԿՐԹԱԿԱՆ ՄՈՂՈՒԼՆԵՐ</b>																
Կուրսային աշխատանք-1	2		x	x	x								x			x
Արտադրական պրակտիկա	4			x	x								x		x	x
Կուրսային աշխատանք-2	2			x	x								x			x
Ամփոփիչ ավարտական քննություն	4														x	x
Ավարտական աշխատանք	12		x	x	x								x		x	x



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈՂՈՒԼՆԵՐԻ  
ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐԸ

**ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՄԱՐԹԱՑՆԵՐ**

0302/B01	Հայոց լեզու և գրականություն-1	2 կրեդիտ
Շաբաթական 2 ժամ	6/24/0	
I կիսամյակ	Ստուգարք	
<p><b>Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի հնչյունական, բառային և քերականական առանձնահատկությունները, ոճագիտական հիմնական հասկացությունները, նպաստել խոսքի թերությունների վերացմանը, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին:</b></p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</b></p> <p><b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ժամանակակից հայոց լեզվի հնչյունական և բառային առանձնահատկությունները, հայոց լեզվի կառուցվածքի, լեզվական միավորների և նրանց միջև առկա հարաբերությունների մասին,</li> <li>• հայ հեղինակների /5-18-րդ դարեր/ գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործությունների իմացություն, գրական երկրի արժևորում</li> <li>• մասնագիտական բառապաշարի, տերմինաբանության, լեզվաոճական հնարների իմացություն</li> </ul> <p><b>Ունակ կլինի.</b></p> <p><b>(բուն մասնագիտական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• կատարելու լեզվական և գրականագիտական վերլուծություններ,</li> </ul> <p><b>(ընդհանրական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• գրական հայերենով կառուցելու բանավոր և գրավոր խոսք, շարադրելու մասնագիտական տեքստեր:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը</b></p> <p><i><b>Թեմա 1.</b></i> Պատմական համառոտ ակնարկ հայերենի զարգացման փուլերի մասին: Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում: <i><b>Թեմա 2.</b></i> Հնչյունաբանություն. հայերենի հնչյունական համակարգը: Շեշտ, վանկ, տողադարձ. հնչյունափոխություն: Ուղղագրություն և ուղղախոսություն: <i><b>Թեմա 3.</b></i> Բառագիտություն. բառերի ձևաիմաստային խմբերը: Բառապաշար. Դասակարգման սկզբունքները. մասնագիտական բառապաշար. տերմիններ: Հայերենի բառակազմական միջոցները: <i><b>Թեմա 4.</b></i> Ոճերի դասակարգումը: Հայերենի գործառական ոճերը: 5-րդ դարի հայ պատմագրությունը: Հայ</p>		

<p>հին և միջնադարյան քնարերգությունը: Գրական երկերի վերլուծություն:</p> <p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները.</b></p> <p>Ստուգարքն անցկացվում է ստուգարքային թելադրության դրական գնահատականի դեպքում՝ եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:</p> <p><b>Հիմնական գրականության ցանկը</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզու /բուհական դասագիրք/, Երևան, 2009:</li> <li>2. Սուքիասյան Ա. Ժամանակակից հայոց լեզու /հնչյունաբանություն, բառագիտություն/, Երևան, 1982:</li> <li>3. Եզեկյան, Ոճաբանություն, Երևան, 2002թ.</li> </ol>
--

<b>0305/B02</b>	<b>Ռուսաց լեզու - 1</b>	<b>4 կրեդիտ</b>
<b>Շաբաթական 4 ժամ</b>	<b>0/60/0</b>	
<b>I կիսամյակ</b>	<b>ստուգարք</b>	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել ռուսաց լեզվի համակարգը, ձևավորել ուսանողի բանավոր խոսքը, երկխոսություն վարելու հմտությունը՝ լեզվական տարբեր ոլորտներում հաղորդակցվելու համար:</p> <p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b></p> <p><b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• որոշակի հմտություններ ռուսաց լեզվի քերականական կառուցվածքի մասին,</li> </ul> <p><b>Ունակ կլինի</b></p> <p><b>(բուն մասնագիտական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• գրագիտորեն կազմելու իր բանավոր խոսքը, մասնակցելու տարաբնույթ երկխոսությունների,</li> </ul> <p><b>(ընդհանրական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ընթերցելու, վերլուծելու և վերարտադրելու ճանաչողական և գեղարվեստական բնույթի տեքստեր:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը</b></p> <p><b>Թեմա 1.</b> Լեզվի դերը հասարակության կյանքում: Ժամանակակից ռուսաց լեզուն աշխարհի լեզուների շարքում:</p> <p><b>Թեմա 2.</b> Հնչյունաբանություն. ձայնավորների և բաղաձայների դասակարգումը, արտասանության և հնչերանգային հիմնական նորմերը: <b>Թեմա 3.</b> Բառագիտություն. պատկերացում բառիմաստի</p>		

մասին. միմաստ և բազմիմաստ բառեր, բառի ուղիղ և փոխաբերական իմաստը, հոմանիշներ և հականիշներ, համանուններ հարանուններ: **Թեմա 4.** Ձևաբանություն. ձևաբանության հիմնական միավորները (բառ, ձևույթ), խոսքի մասերի դասակարգումը և նրանց քերականական կարգերը: **Թեմա 5.** Շարահյուսություն. շարահյուսական միավորները (բառակապակցություն, պարզ նախադասություն), նախադասության գլխավոր անդամները, նախադասության տեսակներն ըստ կառուցվածքի և հաղորդակրցման ուղղվածության

**Գնահատման մեթոդները և չափանիշները**

I կուրսում՝ I կիսամյակում ստուգարք  
 Ստուգարքը անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում կատարված 2 ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

**Հիմնական գրականության ցանկը**

1. Լ.Մ.Սկրտչյան, Ռուսաց լեզու, ԵՊՀ, 2003թ:
2. Ն.Գ.Շաքարյան, Գ.Յու. Օրկուսյան, Ռուսաց լեզվի ուսումնական ձեռնարկ, ֆիզիկայի և ռադիոֆիզիկայի ֆակուլտետների համար, ԵՊՀ, 2000թ.
3. Ֆ.Պ. Երիցյան, Ռուսաց լեզվի ուսումնական ձեռնարկ, ֆիզիկայի և ռադիոֆիզիկայի ֆակուլտետների համար Երևան, Աստղիկ, 2005թ.

0304/B03	Հայոց պատմության հիմնահարցեր -1	2 կրեդիտ
Շաբաթական 2 ժամ	24/0/6	
I կիսամյակ	Ստուգարք	
<p>Դասընթացի նպատակն է ներկայացնել Հայոց պատմությունը հնագույն ժամանակներից մինչև Կիլիկիայի հայկական թագավորության անկումն ընկած ժամանակահատվածը, ծանոթացնել հայոց հնագույն, հին ու միջին դարերի պատմության առանցքային հիմնախնդիրներին, հայոց պետականության ժամանակափուլերին և հայ մշակույթի հիմնահարցերին:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</b></p>		
<p><b>Գիտելիք և իմացություն</b></p>		
<ul style="list-style-type: none"> <li>• ընդհանուր պատկերացում Հայոց պատմության առանցքային հիմնախնդիրների վերաբերյալ, հայոց պետականության ժամանակափուլերի առանձնահատկությունների մասին,</li> </ul>		

ազատագրական պայքարի հերոսական էջերի մասին,

**Ունակ կլինի.**

**(բուն մասնագիտական կարողություններ)**

- գնահատելու Հայոց պատմության դերը համաշխարհային պատմության հոլովությունում, ինքնուրույն մտածելու և անհրաժեշտ դատողություններ անելու Հայոց պատմության տարբեր հարցերի վերաբերյալ, անաչառ գնահատական տալու Հայոց պատմության տարբեր հիմնահարցերին և ազգային-պետական գործիչների գործունեությանը,

**(ընդհանրական կարողություններ)**

- ստեղծագործաբար կիրառելու և զարգացնելու ունեցած գիտելիքները, վերլուծելու փաստերը և հետևություններ անելու, գեկուցումներ պատրաստել ու ու գիտական բանավեճեր վարելու:

**Համատոտ բովանդակությունը.**

**Թեմա 1.** Հայոց պատմության նշված ժամանակահատվածի սկզբնաղբյուրները և ուսումնասիրությունները: **Թեմա 2.** Հայկական լեռնաշխարհը՝ հայերի բնօրրան: Հայ ժողովրդի ծագման հիմնահարցը: **Թեմա 3.** Վանի թագավորությունը: **Թեմա 4.** Երվանդունիների թագավորությունը Ք.ա. 6-3 դդ.: Արտաշեսյանների Հայաստանը Ք.ա. 2-1 դդ.: **Թեմա 5.** Մեծ Հայքի Արշակունիների թագավորությունը 1-5-րդ դարի սկիզբ: **Թեմա 6.** Քրիստոնեության ընդունումը: Հայաստանը 5-7 դդ.: **Թեմա 7.** Արաբական նվաճումները և Հայաստանը: Բագրատունյաց Հայաստանը 9-11-րդ դդ.: **Թեմա 8.** Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը օտար նվաճողների դեմ 11-12-րդ դարերում: **Թեմա 9.** Զաքարյանների իշխանությունը: **Թեմա 10.** Կիլիկիան Հայաստանը 11-14-րդ դդ.: Հայկական մշակույթը հին և միջին դարերում:

**Գնահատման մեթոդները և չափանիշները**

Ստուգաքնն անց է կացվում բանավոր հարցման ձևով:

**Հիմնական գրականության ցանկը**

1. Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Ս.Տ.Մելիք-Բախչյան, Երևան, 1975:
2. Հայ ժողովրդի պատմություն, խմբ. Պ.Հ.Հովհաննիսյան, Երևան, 2006:
3. Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա, հ. 1-ին, Երևան 2006:
4. Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա, հ. 2-րդ, Երևան 2011:

0305/B05	Անգլերեն լեզու -1	4 կրեդիտ
Շաբաթական 4 ժամ	0/60/0	
I կիսամյակ	ստուգաք	
<p>Դասընթացի նպատակն է ուսուցանել մասնագիտական անգլերեն (Professional English) հումանիտար և սոց. գիտությունների ֆակուլտետներում (ուսանողները հանձնել են անգլերեն լեզվի ընդունելության քննություն), ինչպես նաև ընդհանուր անգլերեն (General English) տեխնիկական և բնագիտական ֆակուլտետներում, որտեղ ուսանողները չեն հանձնել անգլերեն լեզվից ընդունելության քննություն:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b>  <b>Գիտելիք և իմացություն</b>  կժանոթանա մասնագիտական անգլերենի գրավոր և բանավոր խոսքի հիմունքներին,  <b>Ունակ կլինի</b>  <b>(բուն մասնագիտական կարողություններ)</b>  կտիրապետի անգլերենի քերականության հիմնական դրույթներին և բառային ֆոնդին:</p>		
<p><b>Համառոտ բովանդակությունը.</b>  <b>Թեմա 1.</b> Արտասանություն, ուղղախոսություն. անգլերենի հնչյունական համակարգի ընդհանուր բնութագիրը, հնչյունների և հնչյոթների արտասանական առանձնահատկությունները, նախադասության հնչերանգը: <b>Թեմա 2.</b> Բառապաշար, բառակազմություն. հիմնական բառակազմական միջոցներ (ածանցում, բառաբարդում, փոխակարգում): <b>Թեմա 3.</b> Քերականություն. խոսքի մասերի քերականական կարգերը, նախադասության շարադասությունը (ուղիղ և շրջոն): <b>Թեմա 4.</b> Առաջարկվող թեմաներ. «Ընտանիք», «Ընտանեկան հարաբերություններ և ավանդույթներ», «Իմ հետաքրքրությունները», «Ճանապարհորդություն», «Երագանքներ», «Իմ ապագա մասնագիտությունը», «Շրջակա միջավայրը և նրա պահպանումը», «Հանրամշակութային երևույթներ» և այլն:</p>		
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները.</b>  Ստուգաքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:</p>		
<p><b>Հիմնական գրականության ցանկը</b>  S. Greenal, Move up (elementary) Macmillan Heinemann 2003</p>		

Liz and John Soars, Headway (elementary), Oxford.  
 Y. Mkhitaryan, Basic English 2008.  
 K.Karapetyan, V.Grigoryan, English for University Students, Yerevan, 2004.  
 R.Murphy, English Grammar in Use, Oxford, 2000.

<b>0302/B06</b>	<b>Հայոց լեզու և գրականություն-2</b>	<b>2 կրեդիտ</b>
<b>2 ժամ</b>	<b>6/24/0</b>	
<b>II կիսամյակ</b>	<b>Հանրագումարային քննություն</b>	
<p>Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերը, ձևաբանական և շարահյուսական ոճագիտության հիմնական հասկացությունները, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</b>  <b>Գիտելիք և իմացություն</b>      ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների մասին.      հայ հեղինակների /19-20-րդ դարեր/ գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործությունների. իմացություն, գրական երկի արժևորում:  <b>Ունակ կլինի.</b>  <b>(բուն մասնագիտական կարողություններ)</b>      ճիշտ տարբերակելու շարահյուսական կապակցության միջոցները, եղանակները, նախադասության կառուցվածքային տեսակները:      կատարելու ձևաբանական և շարահյուսական վերլուծություններ:  <b>(ընդհանրական կարողություններ)</b>      վարելու երկխոսություն և բանավեճ:</p>		
<p><b>Համառոտ բովանդակությունը.</b>  <i>Թեմա 1.</i> Ձևաբանություն. խոսքի մասերի դասակարգումը: <i>Թեմա 2.</i> Ժամանակակից հայերենի թեքվող խոսքի մասերը: <i>Թեմա 3.</i> Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը: <i>Թեմա 4.</i> Շարահյուսություն. կապակցման միջոցներ և եղանակներ. համաձայնությանն ու խնդրառությանը առնչվող սխալների վերացում: <i>Թեմա 5.</i> Պարզ նախադասություն: Բարդ նախադասություն. փոխակերպում և դերբայական դարձված: <i>Թեմա 6.</i> Ուղղակի և անուղղակի խոսք: <i>Թեմա 7.</i> Ժամանակակից հայերենի կետադրությունը: <i>Թեմա 8.</i> Ձևաբանական և շարահյուսական ոճաբանություն: <i>Թեմա 9.</i></p>		

Ճարտասանական հմտություններ. բանավեճի արվեստ. երկխոսության վարում և կազմակերպում: **Թեմա 10.** Հայ նոր գրականության սկզբնավորումը: **Թեմա 11.** 19-20-րդ դարերի հայ գրականությունը: Հայ նորագույն և արդի գրականություն: Գրական երկերի վերլուծություն:

**Գնահատման մեթոդները և չափանիշները.**

Քննությունն անցկացվում է բանավոր, որից առաջ ուսանողները գրում են քննական թելադրություն (3 միավոր): Մնացած 17 միավորը բաշխվում է հետևյալ ձևով: Բանավոր քննության հարցատոմսը պարունակում է երկու տեսական հարց և մեկ գործնական առաջադրանք՝ համապատասխանաբար 6, 6, 5 միավոր արժեքով:

**Հիմնական գրականության ցանկը**

Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզու /բուհական դասագիրք/, Երևան, 2009:  
 Ասատրյան Մ. Ե., Ժամանակակից հայոց լեզու /ձևաբանություն/, Երևան, 2004:

0305/B07	Ռուսաց լեզու - 2	4 կրեդիտ
Շաբաթական 4 ժամ	0/60/0	
II կիսամյակ	ստուգաքո	
Դասընթացի նպատակն է ձևավորել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կազմակերպման հմտությունները, ապահովել մասնագիտական գրականությունից ազատ օգտվելու կարողություն:		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա</b></p> <p><b>Գիտելիք և իմացություն</b></p> <p>կտիրապետի ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական կանոններին, ձևաք կրերի կայուն գիտելիքներ մասնագիտական լեզվի, տերմինաբանության ոլորտում,</p> <p><b>Ունակ կլինի</b></p> <p><b>(բուն մասնագիտական կարողություններ)</b></p> <p>կատարելու մասնագիտական տեքստի շարահյուսական վերլուծություն՝ ելնելով այդ տեքստերին բնորոշ շարահյուսական կառույցների առանձնահատկություններից,</p> <p><b>(ընդհանրական կարողություններ)</b></p> <p>վերլուծելու և վերարտադրելու մասնագիտական տեքստը,</p>		



թարգմանելու մասնագիտական տեքստը ռուսերենից հայերեն և հակառակը:

**Համառոտ բովանդակությունը.**

**Թեմա 1.** Բառագիտություն. դարձվածներ և դարձվածների դասակարգումը: **Թեմա 2.** Ձևաբանություն. խոսքի մասերի քերականական կարգերը: Բառակազմություն. բառի ձևաբանական կազմը: **Թեմա 3.** Շարահյուսություն. միակազմ նախադասություն, միակազմ նախադասության դասակարգումը: Բարդ նախադասություն, բարդ նախադասության դասակարգումը: Ուրիշի ուղղակի և անուղղակի խոսք: **Թեմա 4.** Ուղղագրություն. ուղղագրության հիմնական սկզբունքները և կանոնները: **Թեմա 5.** Մասնագիտական տեքստի կառուցվածքը. տվյալ մասնագիտության տերմինային համակարգը, մասնագիտական տեքստին բնորոշ շարահյուսական կառուցվածքները:

**Գնահատման մեթոդները և չափանիշները**

I կուրսում՝ II կիսամյակում ստուգաք

Ստուգաքը անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում կատարված 2 ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

**Հիմնական գրականության ցանկը**

Լ.Մ.Մկրտչյան, Ռուսաց լեզու, ԵՊՀ 2003թ.

Ն.Գ.Շաքարյան, Գ.Յու. Օրկուսյան, Ռուսաց լեզվի ուսումնական ձեռնարկ, ֆիզիկայի և ռադիոֆիզիկայի ֆակուլտետների համար, ԵՊՀ, 2000թ.

Ֆ.Ո. Երիցյան, Ռուսաց լեզվի ուսումնական ձեռնարկ, ֆիզիկայի և ռադիոֆիզիկայի ֆակուլտետների համար Երևան, Աստղիկ, 2005թ.

0304/B08	Հայոց պատմության հիմնահարցեր – 2	2 կրեդիտ
Շաբաթական 2 ժամ	24/06	
II կիսամյակ	Հանրագումարային քննություն	
Դասընթացի նպատակն է ներկայացնել Հայոց նոր և նորագույն շրջանի պատմության առանցքային հիմնահարցերը, պարզաբանել հայ նոր և նորագույն շրջանի ազգային ազատագրական պայքարի, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, հայոց նորագույն պետականության,		

Սփյուռքի, նոր և նորագույն շրջանի հայ մշակույթի հիմնախնդիրները:

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.**

**Գիտելիք և իմացություն**

Հայոց նոր և նորագույն շրջանի ազատագրական պայքարի կարևորագույն դրվագների վերաբերյալ, Հայկական հարցի, հայոց ցեղասպանության և Սփյուռքի առանցքային հիմնախնդիրների վերաբերյալ, 20-րդ դարում Հայոց նորագույն պետականության ձևավորման գործընթացների վերաբերյալ, նոր և նորագույն շրջանի հայ մշակույթի զարգացման օրինաչափությունների և առանձնահատկությունների մասին ,

**Ունակ կլինի.**

**(բուն մասնագիտական կարողություններ)**

ավելի իրատեսորեն գնահատելու նոր և նորագույն շրջանի պատմության առանցքային իրադարձությունները, Ճիշտ գնահատելու տարբեր ազգային-քաղաքական, հասարակական ուժերի և պատմական նշանավոր գործիչների իրական դերակատարությունը Հայոց նոր և նորագույն շրջանի պատմության մեջ, ընկալելու նոր և նորագույն շրջանի մշակույթի անխազելի կապը հայոց պատմության նույն շրջանի առանցքային իրադարձությունների հետ,

**(ընդհանրական կարողություններ)**

ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները, վերլուծել փաստերը և հետևություններ անել, զեկուցումներ պատրաստել ու գիտական բանավեճեր վարել:

**Համառոտ բովանդակությունը.**

**Թեմա 1.** Հայկական հարցի ծագումը, բովանդակությունը, փուլերը: **Թեմա 2.** Հայ ազատագրական շարժումները XV դարի կեսից մինչև XIX դարի սկիզբը: **Թեմա 3.** Ռուսական տիրապետության հաստատումը Արևելյան Հայաստանում: **Թեմա 4.** Հայկական հարցի միջազգայնացումը: **Թեմա 5.** Հայ ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները XIX դ. 60-80-ական թվականներին: **Թեմա 6.** Հայ ազգային կուսակցությունների հիմնադրումը: **Թեմա 7.** Հայ ազգային-ազատագրական պայքարը XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին: **Թեմա 8.** Հայ ժողովուրդը առաջին աշխարհամարտի տարիներին. Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը: **Թեմա 9.** 1917 թ. Փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխությունները և Հայաստանը: **Թեմա 10.** Հայաստանի Առաջին Հանրապետությունը:

**Թեմա 11.** Հայաստանի Խորհրդային հանրապետությունը (1920-1991 թթ.): **Թեմա 12.** Արցախյան շարժումը: Հայաստանի երրորդ Հանրապետությունը (1991-2012 թթ.): **Թեմա 13.** Հայկական մշակույթը նոր և նորագույն շրջանում: Հայկական Միյուտքը:

**Գնահատման մեթոդները և չափանիշները**  
 հանրագումարային քննություն՝ 20 միավոր առավելագույն արժեքով:  
 հարցատույնը պարունակում է երեք հարց: Առաջին երկուսը՝ 7-ական միավոր, երրորդը՝ վեց: Միավորների քայլը՝ 0.5 է:

**Հիմնական գրականության ցանկը**  
 Հայոց պատմություն. Հիմնահարցեր, խմբ. Հր Ռ. Միմոնյանի, Երևան, 2000:  
 Պարսամյան Վ., Հայ ժողովրդի պատմություն, հ. 3-րդ, Երևան, 1967:  
 Կարապետյան Մ. Ս., Հայաստանը 1912-1920 թվականներին, ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, «Զանգակ-97», 2003:  
 Կարապետյան Մ., Գևորգյան Է., Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին, Ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2007:

<b>0305/B10</b>	<b>Անգլերեն լեզու -2</b>	<b>4 կրեդիտ</b>
<b>Շաբաթական 4 ժամ</b>	<b>0/60/0</b>	
<b>2-րդ կիսամյակ</b>	<b>Մտուգաբք</b>	
<p>Դասընթացի նպատակն է ուսուցանել մասնագիտական անգլերեն (Professional English) հումանիտար և սոցիոլոգիական գիտությունների ֆակուլտետներում, ինչպես նաև տեխնիկական և բնագիտական ֆակուլտետներում՝ ըստ անցումային ժամանակաշրջանի առանձնահատկությունների և պահանջների:</p>		
9. Д. Э. Кнут, Искусство Программирования, Том 1, Основные Алгоритмы, Изд. Вильямс, 3-е издание, 2002.

<b>0101/B25</b>	<b>Մաթեմատիկական անալիզ-2</b>	<b>6 կրեդիտ</b>
<b>Շաբաթական 5 ժամ</b>	<b>45/30/0</b>	
<b>II կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատում</b>	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ հենքային մաթեմատիկական առարկայի երկրորդ բաժնեմասից, որը ներառում է անորոշ և որոշյալ ինտեգրալները, երկրաչափական կիրառությունները, թվային և ֆունկցիոնալ շարքերը</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա,</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• անորոշ և որոշյալ ինտեգրալների հատկություններից,</li> <li>• ֆունկցիոնալ շարքերից:</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b>  <b>(բուն մասնագիտական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• հետազոտելու և հաշվելու անորոշ և որոշյալ ինտեգրալները,</li> <li>• հետազոտելու ֆունկցիոնալ շարքերը և հաշվելու դրանց գումարները,</li> <li>• հաշվելու կորի երկարությունը, հարթ պատկերի մակերեսը և տարածական մարմնի ծավալը:</li> </ul>		
<p><b>(ընդհանրական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• վերլուծել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակները:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը.</b>  <i><b>Թեմա 1.</b></i> Անորոշ ինտեգրալ, հաշվման հիմնական բանաձևերը և եղանակները: <i><b>Թեմա 2.</b></i> Որոշյալ ինտեգրալ, հաշվման հիմնական եղանակները, ինտեգրելի ֆունկցիաների դասեր: <i><b>Թեմա 3.</b></i> Անիսկական ինտեգրալ, առաջին և երկրորդ սեռի ինտեգրալներ: <i><b>Թեմա 4.</b></i> Կորի երկարություն, պատկերի մակերես, մարմնի ծավալ: <i><b>Թեմա 5.</b></i> Թվային շարքեր, զուգամիտության հայտանիշներ: <i><b>Թեմա 6.</b></i> Ֆունկցիոնալ շարքեր և դրանց հատկությունները, հավասարաչափ զուգամիտություն: <i><b>Թեմա 7.</b></i> Աստիճանային և Ֆուրիեի շարքեր:</p>		
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները</b>  <b>Ընթացիկ քննություններ</b></p>		

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**Հիմնական գրականության գանկը**

1. Ильин В.А., Садовничий В.А., Сендов Бл.Х. Математический анализ, т. 1-2.- М.: изд-во МГУ, 1985.
2. Никольский С.М., Курс математического анализа, т.1-2.- М.: Наука, 1983.
3. Фихтенгольц Г.М., Курс дифференциального и интегрального исчисления, т.1-3.- М.: Наука, 1966.
4. Демидович Б.П., Сборник задач и упражнений по математическому анализу.- М.: Наука, 1977.
5. Գևորգյան Գ.Գ., Գալստյան Լ.Հ., Թապալքյան Ա.Վ., Միրայելյան Գ.Վ., Նավասարդյան Կ.Ա., -Մաթեմատիկական անալիզի խրնդրագիրք, մաս I, Երևան 2003:

<b>0105/B26</b>	<b>Հանրահաշիվ</b>	<b>5 կրեդիտ</b>
<b>Շարաթական 4 ժամ</b>	<b>45/15/0</b>	
<b>III կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատում</b>	
Դասընթացի նպատակն է վերջավոր չափանի գծային տարածությունների տեսության և դրանցում գործող գծային օպերատորների ուսումնասիրումը:		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա,</b>		
<b>Գիտելիք և իմացություն</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• գծային տարածության բազիսի, ենթատարածության, Էվրլիդեսյան և ունիտար տարածությունների գաղափարները:</li> </ul>		
<b>Ունակ կլինի</b>		
<b>(բուն մասնագիտական կարողություններ)</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• կիրառելու գծային օպերատորների տեսության հիմնական դրույթները, դրանց մատրիցների կանոնական և ժորդանյան նորմալ տեսքերի կառուցման եղանակները</li> </ul>		

<ul style="list-style-type: none"> <li>կիրառելու քառակուսային ձևերի կանոնական (նորմալ) տեսքի կառուցման մեթոդները:</li> </ul> <p><b>(ընդհանրական կարողություններ )</b></p> <ul style="list-style-type: none"> <li>դիսկրետ օբյեկտների նկատմամբ կիրառվող հաշվարկների և հետազոտման հմտություններ:</li> </ul>
<p><b>Համառոտ բովանդակությունը.</b></p> <p><i>Թեմա 1.</i> Գծային տարածություններ: Գծային օպերատորներ:</p> <p><i>Թեմա 2.</i> Գծային հավասարումների համակարգեր: <i>Թեմա 3.</i> Գծային օպերատորի սեփական արժեքները, գծային օպերատորի մատրիցի նորմալ տեսքը, մատրիցի ժորդանյան նորմալ տեսքը, մատրիցի ժորդանյան նորմալ տեսքն իրական թվերի դաշտի դեպքում: <i>Թեմա 4.</i> Ունիտար և Էվլիդեսյան տարածություններ, օրթոնորմալ բազիսներ, ունիտար (օրթոգոնալ) մատրիցներ, օրթոգոնալ լրացում, նորմալ օպերատորները Էվլիդեսյան տարածություններում, ունիտար (օրթոգոնալ) օպերատորներ, հերմիտյան (սիմետրիկ) օպերատորներ: <i>Թեմա 5.</i> Քառակուսային ձևեր</p>
<p><b>Գնահատման մեթոդներ և չափանիշները</b></p> <p><i>Ընթացիկ քննություններ</i></p> <p>Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:</p> <p><i>Եզրափակիչ քննություն</i></p> <p>Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:</p> <p>Հարցատոմսը պարունակում է 4 հարց յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:</p>
<p><b>Հիմնական գրականության գանկը</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. А.Г. Курош, Курс высшей алгебры, "Наука", Москва, 1971</li> <li>2. В.А. Ильин, Э.Г. Позняк, Аналитическая геометрия, Москва, Изд. Наука, 7-е издание, 2004.</li> </ol>

0104/ B27	ԷՀՄ ճարտարապետություն և աստմբլեր լեզու	4 կրեդիտ
Շաբաթական 4 ժամ	30/30/0	
III կիսամյակ	Եզրափակիչ գնահատում	

Դասընթացի նպատակն է ներկայացնել ԷՀՄ-ի կառուցվածքը, տվյալների ներկայացումը, հրամանների համակարգը, ընդհատումների համակարգը Intel x86 պրոցեսորների համար, ինչպես նաև ասեմբլեր ցածր մակարդակի լեզուն:

**Դասընթացի ավարտին ուսանողը կունենա,**

**Գիտելիք և իմացություն**

- Intel x 86 պրոցեսորների տվյալների ներկայացումների, հրամանների համակարգերի, հրամանի ֆորմատի, հասցեավորման եղանակների հնարավորություններից,
- ծրագրի կառուցվածքից:

**Ունակ կլինի**

**(բուն մասնագիտական կարողություններ)**

- գրելու ծրագրեր ասեմբլեր լեզվով Intel x86 պրոցեսորների համար DOS միջավայրում:

**(ընդհանրական կարողություններ)**

- վերլուծելու ստացված արդյունքները և առաջարկել գործողությունների հետագա ծրագիրը:

**Համառոտ բովանդակությունը.**

*Թեմա 1.* Ճարտարապետություն հասկացությունը: *Թեմա 2.* Պատմական ակնարկ: *Թեմա 3.* Intel x86 պրոցեսորներում տվյալների ներկայացումը: *Թեմա 4.* Intel x86 պրոցեսորները իրական ռեժիմում: *Թեմա 5.* Հրամանների ֆորմատը և հասցեավորման եղանակները: *Թեմա 6.* Ասեմբլեր լեզվի շարահյուսությունը: *Թեմա 7.* Intel x86 պրոցեսորների հրամանների համակարգը՝ ըստ ֆունկցիոնալ խմբերի (թվաբանական, տրամաբանական, տվյալներ տեղափոխող, ղեկավարությունը փոխանցող և այլ հրամաններ):

**Գնահատման մեթոդները և չափանիշները**

**Ընթացիկ քննություններ**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**Եզրափակիչ քննություն**

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:



**Հիմնական գրականության գանկը**

1. Цилькер, Б. Организация ЭВМ и систем / Б.Я. Цилькер, С.А. Орлов. СПб. Питер, 2007, 672 с.
2. Хорошевский, В. Архитектура вычислительных систем / В.Г. Хорошевский. Москва, МГТУ им. Баумана, 2008. 520 с.
3. Таненбаум, Э. Архитектура компьютера/ Э. Таненбаум. СПб. Питер, 2007. 848 с
4. Зубков С.В. Assembler для DOS, Windows, Unix. М., 2000
5. IA-32 Intel Architecture. Software Developer’s Manual.
6. AMD’s AMD64 Developer Guides and Manuals.
7. x86-64: Extending the x86 architecture to 64-bits.

<b>0104/B28</b>	<b>Տվյալների կառուցվածքներ</b>	<b>4 կրեդիտ</b>
<b>Շաբաթական 4 ժամ</b>	<b>30/30/0</b>	
<b>III կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատում</b>	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տվյալների արստրակտ տիպերի հասկացությունը, նրանց կառուցման և օգտագործման ունակությունը:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա,</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• տվյալների արստրակտ տիպերի կառուցման և օգտագործման ձևերից,</li> <li>• որոնման և կարգավորման հիմնական ալգորիթմներից:</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b>  <b>(բուն մասնագիտական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• օգտագործելու տվյալների կառուցվածքները կիրառական խրնդիրներում,</li> </ul>		
<p><b>(ընդհանրական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• վերլուծելու առկա տվյալները և առաջարկելու գործողությունների հետագա ծրագիրը:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը.</b>  <i><b>Թեմա 1.</b></i> Տվյալների արստրակտ տիպեր: <i><b>Թեմա 2.</b></i> Պահունակներ, նրանց համար նախատեսված գործողություններ: <i><b>Թեմա 3.</b></i> Թվաբանական արտահայտությունների ներկայացման նախածանցային (prefix), միջածանցային (infix) և վերջածանցային (postfix) ձևեր: <i><b>Թեմա 4.</b></i> Հերթեր, նրանց համար նախատեսված գործողություններ: <i><b>Թեմա 5.</b></i></p>		

Կապակցված ցուցակներ, նրանց համար նախատեսված գործողություններ: **Թեմա 6.** Կարգավորման ալգորիթմներ: **Թեմա 7.** Ծառեր, բինար ծառեր, որոնման ծառեր, նրանց համար նախատեսված գործողություններ, բուրգեր: **Թեմա 8.** Բալանսա-վորված ծառեր (AVL ծառեր), B ծառեր: Գրաֆներ:

**Գնահատման մեթոդները և չափանիշները**

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**Հիմնական գրականության ցանկը**

1. Форд У., „Структуры данных в С++, М., Бином, 2000г.
2. Кнут Д., „Искусство программирования" том 1, „Основные алгоритмы" Изд-во „Вильямс", М.,2000г.,
3. Ахо А., Хопкрофт Д., Ульман Дж. „Структуры данных и алгоритмы", Изд-во „Вильямс", М.,2000г.,
4. Вирт Н. „Структура данных и алгоритмы" Изд-во „Мир", М.,1988г.
5. Каррано Ф., Причард Дж., Абстракция данных и решение задач на С++, Стены и зеркала. Изд-во „Вильямс", М.,2003г.
6. Лэнгсам И., Огенстайн М., Тенненбаум А., „Структуры данных для персональных ЭВМ" Изд-во „Мир", М.,1988г.
7. Майкл Мейн, Уолтер Савитч, “Структуры данных и другие объекты в С++”, Изд-во „Вильямс", М.,2000г.

0105/B29	Մաթեմատիկական անալիզ-3	5 կրեդիտ
Շաբաթական 5 ժամ	45/30/0	
III կիսամյակ	Եզրափակիչ գնահատում	
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ հենքային մաթեմատիկական առարկայի երրորդ բաժնեմասից, որը ներառում է մի քանի փոփոխականի ֆունկցիաների դիֆերենցիալ հաշիվը,		

կորագիծ, մակերևութային, կրկնակի և եռակի ինտեգրալները:

**Դասնթացի ավարտին ուսանողը կունենա,**

**Գիտելիք և իմացություն**

- մի քանի փոփոխականի ֆունկցիաների սահմանների, անընդհատության, դիֆերենցելիության գաղափարներից,

**Ունակ կլինի**

**(բուն մասնագիտական կարողություններ)**

- հետազոտելու և հաշվելու մի քանի փոփոխականի ֆունկցիաների սահմանները և ածանցյալները,
- հաշվելու կորագիծ, մակերևութային, կրկնակի և եռակի ինտեգրալները,

**(ընդհանրական կարողություններ)**

- մաթեմատիկական մտածելակերպի տարրերի յուրացում:

**Համառոտ բովանդակությունը.**

*Թեմա 1.* Մի քանի փոփոխականի ֆունկցիաների սահման, անընդհատություն, դիֆերենցելիություն: *Թեմա 2.* Մի քանի փոփոխականի ֆունկցիաների էքստրեմումները: *Թեմա 3.* Անբացահայտ ֆունկցիաներ, դրանց գոյությունը և դիֆերենցելիությունը: *Թեմա 4.* Կորագիծ և կրկնակի ինտեգրալներ, դրանց հաշվման եղանակները: *Թեմա 5.* Մակերևութային և եռակի ինտեգրալներ, դրանց հաշվման եղանակները:

**Գնահատման մեթոդները և չափանիշները**

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**Հիմնական գրականության գանկը**

1. Ильин В.А., Садовничий В.А., Сендов Бл.Х., Математический анализ, т. 1-2, М., МГУ, 1985.
2. Никольский С.М., Курс математического анализа, т.1-2. М., Наука, 1983.

3. Фихтенгольц Г.М., Курс дифференциального и интегрального исчисления, т.1-3. М., Наука, 1966.

4. Демидович Б.П., Сборник задач и упражнений по математическому анализу. М. Н., 1977.

5. Գևորգյան Գ.Գ., Գալստյան Լ.Հ., Թապալաքյան Ա.Կ., Միրայելյան Գ.Վ., Նավասարդյան Կ.Ա., -Մաթեմատիկական անալիզի խնդրագիրք, մաս I, Երևան 2003:

<b>0105/B30</b>	<b>Ֆիզիկա</b>	<b>4 կրեդիտ</b>
<b>Շաբաթական 4 ժամ</b>	<b>30/30/0</b>	
<b>III կիսամյակ</b>	<b>Առանց եզրափակիչ գնահատման</b>	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանթացնել ֆիզիկայի հիմնական օրենքներին, նրանց կիրառմանը գիտության և տեխնիկայի տարբեր ոլորտներում, ինչպես նաև հասարակական կյանքում:		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա,</b></p> <p><b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>մեխանիկայի, մոլեկուլյար ֆիզիկայի, էլեկտրականության, մագնիսականության և օպտիկայի հիմնական օրենքներից:</li> </ul> <p><b>Ունակ կլինի</b></p> <p><b>(բուն մասնագիտական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>հասկանալու ֆիզիկական երևույթների, փորձերի, օրենքների կապը, օրենքների համակարգի ներքին տրամաբանությունը, այդ համակարգից բխող հիմնական հետևությունները և արդյունքները,</li> <li>կարողանալու ստացած գիտելիքները կիրառել կոնկրետ բնույթ կրող հարցերի վերլուծության, խնդիրների լուծման համար:</li> </ul> <p><b>(ընդհանրական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>վերլուծել, պարզաբանել ֆիզիկական երևույթները:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը.</b></p> <p><b>Թեմա 1.</b> Մեխանիկայի հիմնական օրենքները: Շարժում, շարժման տեսակները: <b>Թեմա 2.</b> Աշխատանք և էներգիա: <b>Թեմա 3.</b> Ջերմաստիճան և ջերմություն: <b>Թեմա 4.</b> Թերմոդինամիկայի օրենքները: <b>Թեմա 5.</b> Լիցք: Էլեկտրական դաշտ և պոտենցիալ: <b>Թեմա 6.</b> Հոսանք: Հաղորդիչ, մեկուսիչ: <b>Թեմա 7.</b> Մագնիսական դաշտ, մագնիսական ուժեր: Էլեկտրամագնիսական ինդուկցիա: <b>Թեմա 8.</b> Փոփոխական հոսանք: <b>Թեմա 9.</b> Էլեկտրամագնիսական ալիքներ: <b>Թեմա 10.</b> Երկրաչափական</p>		

և ավիաբային օպտիկա: Ինտերֆերենց և դիֆրակցիա: **Թեմա 11.** Ատոմի և միջուկի ֆիզիկայի տարրեր: **Թեմա 12.** Հարաբերականություն:

**Գնահատման մեթոդները և չափանիշները**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է 3 հարց: Ստուգման ձևերն են.

- 1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:
- 2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

**Հիմնական գրականության ցանկը**

1. Д. В. Сивухин, Общий курс физики, М., Наука, 1977.
2. И. В. Савельев, Курс общей физики, М., Наука, 2002.
3. Մ.Գ. Աբրահամյան, Մեխանիկայի ֆիզիկական հիմունքները, ԵՊՀ Հրատար. Երևան-1997.
4. Դ.Մ.Սեդրակյան, Ա.Ա.Պապոյան, Էլեկտրականություն և մագնիսականություն, Երևան, ԷԴԻՏ-պրինտ, 2010.
5. University Physics, 12<sup>th</sup> edition (with modern physics) Hugh D Young, Rozer A.Fredman, 2007.

<b>0104/B31</b>	<b>GUI ծրագրավորում</b>	<b>4 կրեդիտ</b>
<b>Շաբաթական 4 ժամ</b>	<b>15/45/0</b>	
<b>IV կիսամյակ</b>	<b>Առանց եզրափակիչ գնահատման</b>	
Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել Windows օպերացիոն համակարգի պատուհանների և հաղորդագրությունների համակարգին, օգտագործողի գրաֆիկական ինտերֆեյսի էլեմենտներին և գրաֆիկական ծրագրավորման հիմունքներին Visual C++-ի և MFC գրադարանի միջոցով:		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա,</b>		
<b>Գիտելիք և իմացություն</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• Visual C++ միջավայրից, MFC գրադարանից,</li> <li>• Windows օպերացիոն համակարգի, օգտագործողի ինտերֆեյսի հիմնական էլեմենտների և գրաֆիկական ծրագրավորման հիմունքներից:</li> </ul>		
<b>Ունակ կլինի</b>		
<b>(բուն մասնագիտական կարողություններ)</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• օգտագործելու ստացված գիտելիքները գրաֆիկական</li> </ul>		

<p>ինտերֆեյսով ծրագրեր մշակելու համար:  <b>(ընդհանրական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>վերլուծել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակները:</li> </ul>
<p><b>Համառոտ բովանդակությունը.</b></p> <p><b>Թեմա 1.</b> QT-ի բաղկացուցիչ մասերը, դասերի հիերարխիան: Պատուհաններ և իրադարձություններ: Միջօբյեկտային կապեր: <b>Թեմա 2.</b> Ղեկավարման էլեմենտներ: Էլեմենտների տեղակայում: <b>Թեմա 3.</b> Էլեմենտ ների արտաբերման տարրեր: Կարգաբերման էլեմենտներ: <b>Թեմա 4.</b> Կոճակներ: <b>Թեմա 5.</b> Օգտագործողի ինտերֆեյսի ղեկավարող էլեմենտներ: <b>Թեմա 6.</b> Ընտրման էլեմենտներ: <b>Թեմա 7.</b> Գրաֆիկական ծրագրավորում QT գրադարանի միջոցով: <b>Թեմա 8.</b> Հավելվածների ստեղծում: Մենյուներ: Երկխոսական պատուհաններ:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները</b></p> <p>Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է 3 հարց: Ստուգման ձևերն են.</p> <p>1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:  2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:</p>
<p><b>Հիմնական գրականության ցանկը</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. J.Blanchette, M.Summerfield, C++GUI Programming with Qt4, Prentice Hall, 2008</li> <li>2. Ж.Бланшет, М.Саммерфильд, Qt 4: Программирование GUI на C++, Кудиц-Пресс, Москва, 2008</li> <li>3. Э. Троелсен, “С# 2010 и платформа NET 4”</li> <li>4. С. Робинсон и др., “С# для профессионалов”.</li> </ol>

0105/B32	Կոմպլեքս անալիզ	6 կրեդիտ
Շաբաթական 5 ժամ	45/30/0	
IV կիսամյակ	Եզրափակիչ գնահատում	
Դասընթացի նպատակն է տալ գիտելիքներ կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաների տեսության այն հիմնական դրույթներից, որոնք կօգնեն ուսանողներին՝ յուրացնելու բարձր կուրսերում կարդացվող մասնագիտական առարկաները:		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա,</b>		

**Գիտելիք և իմացություն**

- մնացքների տեսությունից և նրա կիրառություններից,
- կոնֆորմ արտապատկերումներից, լոգարիթմական մնացքներից, դրանց կիրառություններից:

**Ունակ կլինի**

**(բուն մասնագիտական կարողություններ)**

- օգտագործելու անալիտիկ ֆունկցիաների հիմնական հատկությունները (Կոշիի ինտեգրալային բանաձևը, Թեյլորի և Լորանի շարքեր):

**(ընդհանրական կարողություններ)**

- մաթեմատիկական մտածելակերպի տարրերի յուրացման ամրապնդում:

**Համառոտ բովանդակությունը.**

*Թեմա 1.* Կոմպլեքս թվեր և գործողություններ դրանց հետ: *Թեմա 2.* Կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաներ, անընդհատություն, ածանցյալ, ինտեգրում: *Թեմա 3.* Անալիտիկ ֆունկցիաների տեսության հիմնական թեորեմը (Կոշիի ինտեգրալային թեորեմը): *Թեմա 4.* Կոշիի ինտեգրալային բանաձևը: *Թեմա 5.* Կոշիի տիպի ինտեգրալ: *Թեմա 6.* Անալիտիկ ֆունկցիաների հաջորդակա-նություններ և շարքեր: *Թեմա 7.* Լորանի շարք: *Թեմա 8.* Մնացքների տեսություն: *Թեմա 9.* Ֆունկցիայի լոգարիթմական մնացք և նրա կիրառությունները:

**Գնահատման մեթոդները և չափանիշները**

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**Հիմնական գրականության ցանկը**

1. Привалов И.И., Введение в теорию функций комплексного переменного, М. Наука, 1977.
2. Свешников А.Г., Тихонов А.Н. Теория функций комплексной переменной. М. Наука, 1967.

3. Сидоров Ю.В., Федорюк М.В. Лекции по теории функций комплексного переменного. М.2 Наука, 1982
4. Կիտրայան Ա.Ս., Հակոբյան Ս.Ա., Միքայելյան Լ.Վ. Կոմպլեքս փոփոխականի ֆունկցիաների տեսության խնդիրներ և վարժություններ. Երևան, 1990.

<b>0105/B33</b>	<b>Ռադիոէլեկտրոնիկա</b>	<b>4 կրեդիտ</b>
<b>Շաբաթական 4 ժամ</b>	<b>30/30/0</b>	
<b>IV կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատում</b>	
<p>Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել ռադիոէլեկտրոնիկայի հիմնական խնդիրները, նրանց լուծման հիմնական մեթոդները, ինչպես նաև ծանոթացնել ռադիոէլեկտրոնային համակարգերին, որոնց միջոցով իրականացվում է այդ խնդիրների լուծումը:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• կիմանա ռադիոէլեկտրոնային համակարգերի կառուցվածքի մասին,</li> </ul> <p><b>Ունակ կլինի</b>  <b>(բուն մասնագիտական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• վերլուծելու ռադիոէլեկտրոնային համակարգերի աշխատանքը,</li> </ul> <p><b>(ընդհանրական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• մոդելավորել ռադիոէլեկտրոնային համակարգերը:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակություն.</b>  <i>Թեմա 1.</i> Ազդանշաններ, նրանց դասակարգումը և ներկայացման ձևերը: <i>Թեմա 2.</i> Կենտրոնացված պարամետրերով գծային համակարգեր: <i>Թեմա 3.</i> Բաշխված պարամետրերով համակարգեր: <i>Թեմա 4.</i> Ուժեղացուցիչներ և գեներատորներ: <i>Թեմա 5.</i> Ոչ գծային համակարգեր: <i>Թեմա 6.</i> Մոդուլում, դետեկտում, հաճախությունների փոխակերպում:</p>		



**Գնահատման մեթոդները և չափանիշները**

- Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:
- Եզրափակիչ քննություն
- Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

**Հիմնական գրականության ցանկը**

1. Харкевич А.А., Основы радиотехники М.2004г,
2. Баскаков С.И. Радиотехнические цепи и сигналы, М.2002г.

<b>0104/B34</b>	<b>Ալգորիթմների տեսություն</b>	<b>4կրեդիտ</b>
<b>Շաբաթական 4 ժամ</b>	<b>30/30/0</b>	
<b>IV կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատում</b>	
<p>Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին ալգորիթմ գաղափարի երկու հիմնական ճշգրտումներին (կարգընթաց ֆունկցիաներ, Թյուրինգի մեքենաներ) և նրանց համարժեքությանը, ներմուծել համապիտանի ֆունկցիայի գաղափարը և քննարկել նրա գոյության հնարավորությունները, ծանոթացնել լուծելի և անլուծելի խնդիրներին, ճանաչելի և կիսաճանաչելի բազմություններին և նրանց հատկություններին:</p>		
<p><b>Դասնթացի ավարտին ուսանողը կունենա, Գիտելիք և իմացություն</b> ալգորիթմի ճշգրտման տարբեր եղանակներից, <b>Ունակ կլինի</b> <b>(բուն մասնագիտական կարողություններ)</b> կառուցելու տարբեր ֆունկցիաներ հաշվող Թյուրինգի մեքենաներ և ապացուցելու տրված ֆունկցիայի կարգընթացությունը, ֆունկցիաների տրված բազմության համար կառուցելու համապիտանի ֆունկցիա, տարբերելու լուծելի և անլուծելի խնդիրները, ճանաչելի, կիսա-ճանաչելի և ոչ կիսաճանաչելի բազմությունները: <b>(ընդհանրական կարողություններ)</b> վերլուծել առկա խնդիրները և մշակել դրանց լուծման ալգորիթմները:</p>		

**Համառոտ բովանդակությունը.**

**Թեմա 1.** Գյոդելի ձևաբանությունը (ֆորմալիզացիան). ալգորիթմի հնտուիտիվ գաղափարի ճշգրտման անհրաժեշտությունը, կարգընթաց (ռեկուրսիվ) ֆունկցիաների սահմանումը, նրանց հատկությունները, Չյորչի թեզի հիմնավորումը: **Թեմա 2.** Թյուրինգի ձևաբանությունը. Թյուրինգի մեքենաներ, գործողություններ նրանց հետ, կարգընթաց ֆունկցիաների հաշվարկելիությունն ըստ Թյուրինգի, Թյուրինգի մեքենայի աշխատանքային գործընթացի թվաբանականացում (Գյոդելի համարակալում), համապիտանի (ունիվերսալ) ֆունկցիա և նրա կառուցման հնարավորությունը, անշարժ կետի մասին և S-m-n թեորեմները: **Թեմա 3.** Ճանաչելի (ռեկուրսիվ) բազմություններ հարաբերություններ, նրանց հատկությունները, Ռայսի թեորեմը, Կանտորի համարակալումը: **Թեմա 4.** Կիսաճանաչելի (ռեկուրսիվ թվարկելի) բազմություններ, հարաբերություններ, նրանց հատկությունները, Պոստի թեորեմը: **Թեմա 5.** Հարաբերության պրոյեկցիա, ֆունկցիայի գրաֆիկ: **Թեմա 6.** Ակյունծելի պրոբլեմներ:

**Գնահատման մեթոդները և չափանիշները** Ընթացիկ քննություններ Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:  
Եզրափակիչ քննություն  
Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**Հիմնական գրականության ցանկը**

Мальцев А.И., Алгоритмы и рекурсивные функции, Москва, “Нау-ка”, 1986.  
Роджерс Х., Теория рекурсивных функций и эффективная вычислимость, Москва, “Наука”, 1972.  
Трахтенброт Б.А., Сложность вычислений и алгоритмов, Новоси -бирск, 1972.  
Տոնոյան Ռ.Ն., Չուբարյան Ա.Ա., Ավտոմատներ եւ Թյուրինգի մեքենաներ, Երեւան, ԵՊՀ հրատարակչություն, 1984:  
Հ.Ռ.Բոլիբեկյան, Հ.Գ.Մովսիսյան, Ա.Ա.Չուբարյան, Ալգորիթմների

տեսության խնդիրների ժողովածու. ԵՊՀ հրատարակչություն. Երևան. 2008:

<b>0104/B35</b>	<b>Օպերացիոն համակարգեր</b>	<b>6 կրեդիտ</b>
<b>Շաբաթական 5 ժամ</b>	<b>45/30/0</b>	
<b>IV կիսամյակ</b>	<b>Առանց եզրափակիչ գնահատման</b>	
<p>Դասընթացի նպատակն է ներկայացնել ժամանակակից օպերացիոն համակարգերի ներքին կառուցվածքը, հիմնական ֆունկցիաները, այն խնդիրները, որոնք առաջանում են օպերացիոն համակարգերի նախագծման ժամանակ:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա,</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• օպերացիոն համակարգերի նախագծման հետ կապված հիմնական խնդիրներից, Windows և Linux օպերացիոն համակարգերի առանձնահատկություններից,</li> <li>• բազմապրոցեսային և բազմահոսքային կիրառությունների ստեղծման սկզբունքներից:</li> </ul> <p><b>Ունակ կլինի</b>  <b>(բուն մասնագիտական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• օգտագործելու համակարգային կանչերը՝ օպերացիոն համակարգի միջուկի օբյեկտները կազմվելիք ծրագրերում:</li> </ul> <p><b>(ընդհանրական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• վերլուծել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակները:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը.</b>  <i>Թեմա 1.</i> Օպերացիոն համակարգերի հիմնական հասկացությունները: <i>Թեմա 2.</i> Օպերացիոն համակարգերի կառուցվածքը: <i>Թեմա 3.</i> Պրոցեսներ, հոսքեր: <i>Թեմա 4.</i> Միջպրոցեսային փոխգործակցություն: <i>Թեմա5.</i> Մինիստրոնիզացման ալգորիթմները և միջոցները: Սեմաֆորներ, մյուստեքսներ, մոնիտորներ: <i>Թեմա 6.</i> Պրոցեսների և հոսքերի պլանավորումը: <i>Թեմա 7.</i> Փոխբացառման պրոբլեմը և լուծման եղանակները: <i>Թեմա 8.</i> Հիշողության դեկավարումը: <i>Թեմա 9.</i> Վիրտուալ և ֆիզիկական հիշողություն: <i>Թեմա 10.</i> Հիշողության էջային, սեգմենտային և էջասեգմենտային կազմակերպման եղանակները: <i>Թեմա 11.</i> Մուտքի-ելքի դեկավարումը: Ֆայլային համակարգեր:</p>		

**Գնահատման մեթոդները և չափանիշները**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է 3 հարց: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

**Հիմնական գրականության գանկը**

1. Э.Таненбаум, “Современные операционные системы”, СПб, Питер, 2006г.
2. Г. Дейтел, „Введение в операционные системы”, Москва, 2005г.
3. Джонсон М.Харт, „Системное программирование в среде Win32”, СПб, Питер, 2006г.
4. Джеффри Рихтер, „Windows для профессионалов”, СПб, Питер, 2003г.
5. Гордеев А.В., Молчанов А. Ю., „Системное программное обеспечение”, СПб, Питер, 2001г.
6. Вильямс Ал, „Системное программирование в Windows 2000”, СПб, Питер, 2001г.

<b>0104/B36</b>	<b>Գրաֆների տեսություն</b>	<b>2 կրեդիտ</b>
<b>Շաբաթական 2 ժամ</b>	<b>30/0/0</b>	
<b>IV կիսամյակ</b>	<b>Առանց եզրափակիչ գնահատման</b>	
Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գրաֆների տեսության հիմնական գաղափարները և ձևավորել ուսանողների մոտ գրաֆների տեսության որպես մաթեմատիկական մոդելավորման կարևոր միջոցի ընկալումը:		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա,</b>		
<b>Գիտելիք և իմացություն</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• գրաֆների տեսության կարևոր թեորեմները և դրանց կիրառությունների հնարավորությունները</li> </ul>		
<b>Ունակ կլինի</b>		
<b>(բուն մասնագիտական կարողություններ)</b>		
լուծել գրաֆների տեսության պարզ և միջին բարդության խնդիրներ, գտնել վերջավոր գրաֆների կարևոր պարամետրերի ճշգրիտ արժեքները կամ գնահատականները դրանց համար, կիրառել		

<p>գրաֆները որպես մաթեմատիկական մոդելավորման լեզու:  <b>(ընդհանրական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>վերլուծել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակները:</li> </ul>
<p><b>Համառոտ բովանդակությունը.</b>  <b>Թեմա 1.</b> Գրաֆ: Գրաֆի սահմանումը և տրման եղանակները <b>Թեմա 2.</b> Գրաֆը որպես մետրիկական տարածություն: Գրաֆի ենթագրաֆներ <b>Թեմա 3.</b> Երկկողմանի գրաֆներ, ծառեր: <b>Թեմա 4.</b> Ցիկլեր: <b>Թեմա 5.</b> Գագաթային և կողային անկախություն: <b>Թեմա 6.</b> Ներկումներ:</p>
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները</b>  Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է 3 հարց: Ստուգման ձևերն են.  1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:  2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:</p>
<p><b>Հիմնական գրականության ցանկը</b></p>

0104/B37	Մաթեմատիկական մոդելավորում և թվային մեթոդներ	6 կրեդիտ
Շաբաթական 6 ժամ	45/45/0	
VII կիսամյակ	Եզրափակիչ գնահատում	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել տարբեր տիպի գործընթացների մոդելավորմանը, համապատասխան թվային հաշվարկի մեթոդների ուսումնասիրմանը:		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</b>		
<b>Գիտելիք և իմացություն</b>		
<ul style="list-style-type: none"> <li>մոդելավորման համար անհրաժեշտ մաթեմատիկական և մոդելավորման հիմնական մեթոդներից,</li> </ul>		
<b>Ունակ կլինի</b>		
<b>(բուն մասնագիտական կարողություններ)</b>		
<ul style="list-style-type: none"> <li>հասկանալու մաթեմատիկական մոդելավորման հիմնական սկզբունքները,</li> </ul>		
<b>(ընդհանրական կարողություններ)</b>		

- կկարողանա ստեղծել համակազմերի մաթեմատիկական մոդելներ:

### **Համառոտ բովանդակություն**

**Թեմա 1.** Ինտերպոլացիայի խնդիր: Ֆունկցիայի մոտարկման խնդրի դրվածքը: Նյուտոնի ինտերպոլացիոն բանաձևը տարբերական հարաբերություններով: Լագրանժի ինտերպոլացիոն բանաձևը հավասարահեռ հանգույցների համար: **Թեմա 2.** Գծային հանրահաշվական հավասարումների լուծման մոտավոր մեթոդներ: Գաուս-ժորդանի մեթոդը: **Թեմա 3.** Թվային ինտեգրում: Սիմպսոնի (պարաբոլների) բանաձևը և նրա մնացորդային անդամի գնահատականը: **Թեմա 4.** Դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումների լուծման ապրոքսիմացիոն մեթոդներ: Կոշու խնդիրը առաջին կարգի սովորական դիֆերենցիալ հավասարման համար: Էյլերի մեթոդը: **Թեմա 5.** Ոչ գծային հավասարումների լուծման մոտավոր մեթոդներ: Ոչ գծային հավասարումների արմատների առանձնացումը: Համակցման մեթոդը:

### **Գնահատման մեթոդները և չափանիշները**

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորների քայքայ 0.5 է:

### **Հիմնական գրականության ցանկը**

1. Հակոբյան Յու.Ռ., Թվային մեթոդներ, մաս I, „Արմենիկա”, Երևան, 2003:
2. Бахвалов Н. С. Численные методы., М., Наука , 1975
3. Бахвалов Н.С., Жидков Н.П., Кобельков Г.М. Численные методы. М.,Наука,1987.
4. Демидович Б. П., Марон И. А. Основы вычислительной математики, М., Наука 1970.
5. Дикорев В.А., Кольцов В.П., Мельников А.Ф., Шкляр Л.И. Вычислительные методы в задачах радиоэлектроники.- Киев, В. школа, 1989

6. Копченова Н. В., Марон И. А., Вычислительная математика в примерах и задачах, М., Наука, 1972.

<b>0105/B38</b>	<b>Դիֆերենցիալ հավասարումներ</b>	<b>6 կրեդիտ</b>
<b>Շաբաթական 5 ժամ</b>	<b>45/30/0</b>	
<b>V կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատում</b>	
<p>Դասընթացի նպատակն է ներկայացնել դիֆերենցիալ հավասարումների և համակարգերի ընդհանուր տեսությունը, Կոշիի խնդիրը և եզրային խնդիրները, գծային հավասարումները և համակարգերը, հավասարումների լուծումների կայունության տեսությունը:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա,</b>  <b>Գիտելիք և իմացություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• սովորական դիֆերենցիալ հավասարումների համար հիմնական խնդիրների ուսումնասիրման մեթոդներից:</li> </ul> <p><b>Ունակ կլինի</b>  <b>(բուն մասնագիտական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• լուծելու հատուկ տիպի դիֆերենցիալ հավասարումներ:</li> </ul> <p><b>(ընդհանրական կարողություններ)</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• վերլուծել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակները:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակությունը.</b>  <i>Թեմա 1.</i> Առաջին կարգի դիֆերենցիալ հավասարումների լուծման մեթոդները: <i>Թեմա 2.</i> Բարձր կարգի դիֆերենցիալ հավասարումների լուծման մեթոդները: <i>Թեմա 3.</i> Բարձր կարգի գծային դիֆերենցիալ հավասարումների ֆունդամենտալ լուծումների կառուցումը: <i>Թեմա 4.</i> Բարձր կարգի գծային, հաստատուն գործակիցներով դիֆերենցիալ հավասարումների համակարգի լուծման մեթոդները: <i>Թեմա 5.</i> Ֆրեդհոլմի ինտեգրալ հավասարումների լուծման մեթոդները:</p>		
<p><b>Գնահատման մեթոդները և չափանիշները</b>  Ընթացիկ քննություններ  Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p>		

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**Հիմնական գրականության ցանկը**

1. Петровский И.Г., Лекции по теории обыкновенных дифференциальных уравнений. М. Наука, 1984г.
2. Понтрягин Л.С., Обыкновенные дифференциальные уравнения., М., Наука, 1982г.
3. Степанов В.В., Курс дифференциальных уравнений., М., Физматгиз, 1959г.
4. Арнольд В.И., Обыкновенные дифференциальные уравнения, М., Наука, 1975г.
5. Эльсгольц Л.Э., Обыкновенные дифференциальные уравнения, М., Гостехиздат.м 1957г.
6. Филиппов А.Ф., Сборник задач по обыкновенным дифференциальным уравнениям, М., Наука, 1992г.
7. Ղազարյան Հ.Գ., Մամիկոնյան Ֆ.Հ., Հովհաննիսյան Ա.Հ., Կարապետյան Գ.Ա., - Սովորական դիֆերենցիալ հավասարումներ, Երևան, ԵՊՀ, 1988:
8. Ղազարյան Հ.Գ., Հովհաննիսյան Ա.Հ., Հարությունյան Տ.Ն., Կարապետյան Գ.Ա., - Դիֆերենցիալ հավասարումներ, Երևան, ԵՊՀ, 2002:

<b>0105/B39</b>	<b>Ֆունկցիոնալ անալիզ</b>	<b>4 կրեդիտ</b>
<b>Շաբաթական 3 ժամ</b>	<b>45/0/0</b>	
<b>V կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատում</b>	
<b>Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ ֆունկցիոնալ անալիզի հիմունքներից, ծանոթացնել այդ առարկայի ժամանակակից մեթոդներին և նրանց կիրառություններին ինչպես զուտ մաթեմատիկական, այնպես էլ բնագիտական խնդիրներում:</b>		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա,</b>		
<b>Գիտելիք և իմացություն</b>		
• ժամանակակից ֆունկցիոնալ անալիզի մեթոդներից:		
<b>Ունակ կլինի</b>		



**(բուն մասնագիտական կարողություններ)**

- կիրառելու յուրացրած մեթոդները մաթեմատիկայի այլ բնագավառներում առաջացող խնդիրներում,
- լուծելու մաթեմատիկական ֆիզիկայի մի շարք խնդիրներ ֆունկցիոնալ անալիզի մեթոդներով:

**(ընդհանրական կարողություններ)**

- վերլուծել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման եղանակները:

**Համառոտ բովանդակությունը.**

*Թեմա 1.* Լեբեգի չափ և Լեբեգի ինտեգրալ: *Թեմա 2.* Նորմավորված տարածություններ: *Թեմա 3.* Ֆունկցիոնալներ և գծային անընդհատ օպերատորներ: Խան-Բանախի թորեմներն ու նրա հետևանքները: *Թեմա 4.* Բանախյան տարածությունների վրա գործող օպերատորների հիմնական հատկությունները: *Թեմա 5.* Հիլբերտյան տարածություններ: *Թեմա 6.* Օպերատորների սպեկտոր և ռեզոլվենտ: Կոմպակտ օպերատորների սպեկտրիալ տեսությունը: *Թեմա 7.* Ինքնահամալուծ օպերատորների սպեկտրիալ տրոհումը: *Թեմա 8.* Լոկալ ուռուցիկ տարածություններ: *Թեմա 9.* Բանախյան հանրահաշիվ:

**Գնահատման մեթոդները և չափանիշները**

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է 4 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1-ական միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3, 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

**Հիմնական գրականության ցանկը**

1. Колмогоров А.Н., Фомин С.В. Элементы теории функций и функционального анализа. М. Наука, 1968.
2. Люстерник Л.А., Соболев В.И. Краткий курс функционального анализа. М., Высшая школа, 1982.
3. Рисс Ф., Секефальви-Надь Б. Лекции по функциональному анализу. М., Мир, 1979.
4. Иосида К. Функциональный анализ. М., Мир, 1967.

5. Кириллов А.А., Гвишиани А.Д. Теоремы и задачи функционального анализа. М. Наука, 1979.

0105/B40	Գիսահաղորդչային սարքերի ֆիզիկա	6 կրեդիտ
Շաբաթական 5 ժամ	45/30/0	
V կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման	
<p>Դասընթացը ուսանողներին հաղորդում է հիմունքային անհրաժեշտ գիտելիքներ համակարգչի ֆիզիկական ապահովության և համակարգչային մոդելավորման մասին:</p>		
<p><b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</b></p>		
<p><b>Գիտելիք և իմացություն</b></p>		
<ul style="list-style-type: none"> <li>• կիմանա կիսահաղորդիչների և կիսահաղորդչային սարքերի դերն ու նշանակությունը, կիսահաղորդչային սարքերի տիպերն ու նրանց կիրառման ոլորտը,</li> </ul>		
<p><b>Ունակ կլինի</b></p>		
<p><b>(բուն մասնագիտական կարողություններ)</b></p>		
<ul style="list-style-type: none"> <li>• հասկանալու կիսահաղորդիչների գոտիական կառուցվածքը, սեփական և խառնուրդային կիսահաղորդիչների հատկությունները և նրանց հիման վրա կառուցված սարքերի աշխատանքը:</li> </ul>		
<p><b>(ընդհանրական կարողություններ)</b></p>		
<ul style="list-style-type: none"> <li>• կկարողանա կատարել կիսահաղորդիչների և կիսահաղորդչային սարքերի էլեկտրական և այլ ֆիզիկական վերլուծություն և այդ բնութագրերի տեսական հաշվարկներ:</li> </ul>		
<p><b>Համառոտ բովանդակություն.</b></p>		
<p><i><b>Թեմա 1.</b></i> Լիցքակիրների վիճակագրությունը կիսահաղորդիչներում: <i><b>Թեմա 2.</b></i> Կիսահաղորդիչների ֆիզիկական մոդելը: <i><b>Թեմա 3.</b></i> Էլեկտրոնախոռոչային անցում: <i><b>Թեմա 4.</b></i> Կիսահաղորդչային սարքեր համասեռ կիսահաղորդիչների հիման վրա: <i><b>Թեմա 5.</b></i> Դիոդ, տրանզիստոր և տիրիստոր: <i><b>Թեմա 6.</b></i> Լուսազգայուն սարքեր: <i><b>Թեմա 7.</b></i> Լուսատու սարքեր: <i><b>Թեմա 8.</b></i> Տարբեր ֆիզիկական մեծությունների կիսահաղորդչային փոխակերպիչ սարքեր: <i><b>Թեմա 9.</b></i> Կիսահաղորդչային պասիվ տարրեր: <i><b>Թեմա 10.</b></i> Ինտեգրալ միկրոսխեմաներ: <i><b>Թեմա 11.</b></i> Ակնարկ ժամանակակից կիսահաղորդչային սարքերի մասին:</p>		

**Գնահատման մեթոդները և չափանիշները**

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Յուրաքանչյուր ստուգում ներառում է 3 հարց: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Ստուգողական աշխատանք: Միավորների քայլը 0,5 է:

**Հիմնական գրականության ցանկը**

1. Ансельм А.И., Введение в теорию полупроводников, М., 1978.
2. Бонч-Бруевич В.Л., Калашников С.Г., Физика полупроводников, М., 1977.
3. Ландау Л.Д., Лифшиц Е.М. Квантовая механика, М., 1989.

<b>0105/B41</b>	<b>Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն</b>	<b>6 կրեդիտ</b>
<b>Շաբաթական 6 ժամ</b>	<b>45/45/0</b>	
<b>V կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատում</b>	
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հավանականության գաղափարին ու նրա կիրառություններին, ինչպես նաև մաթեմատիկական վիճակագրությանը:		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.</b>		
<b>Գիտելիք և իմացություն</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• կիմանա հավանականության գաղափարն ու նրա կիրառությունները, մաթեմատիկական վիճակագրության տարրերը,</li> </ul>		
<b>Ունակ կլինի</b>		
<b>(բուն մասնագիտական կարողություններ)</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• հասկանալու հավանականության գաղափարի և մաթեմատիկական վիճակագրության դերը գիտության տարբեր ոլորտներում,</li> </ul>		
<b>(ընդհանրական կարողություններ)</b>		
<ul style="list-style-type: none"> <li>• կկարողանա ֆիզիկայի խնդիրներն ուսումնասիրելիս հմտորեն կիրառել հավանականության տեսության մեթոդները:</li> </ul>		
<b>Համառոտ բովանդակություն</b>		
<i>Թեմա 1.</i> Հավանականության գաղափարի տարբեր սահմա-		

նումներ: **Թեմա 2.** Պայմանական հավանականություն: Լրիվ հավանականության բանաձևը: Բայեսի բանաձև: **Թեմա 3.** Փորձարկումների հաջորդականություններ: Բեռնուլլի անկախ փորձարկումների սխեման: Մուավրի-Լապլասի սահմանային թեորեմները: **Թեմա 4.** Պատահական մեծություն: Պատահական մեծության բաշխման օրենքներ: Պատահական մեծության թվային բնութագրեր: **Թեմա 5.** Վիճակագրության հիմնական խնդիրները:

**Գնահատման մեթոդները և չափանիշները**

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց յուրաքանչյուրը՝ 2,5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

**Հիմնական գրականության ցանկը**

1. Гнеденко, „Курс теории вероятности и математической статистики”.
2. Համբարձումյան Գ.Հ., Հավանականությունների տեսության դասընթաց, Երևան, 1971.
3. Մեսրոպյան Ն.Խ., Ղազանյան Տ.Պ., Հավանականությունների տեսության խնդրագիրք, Երևան, 1986.

<b>0104/B42</b>	<b>Տվյալների հենքեր</b>	<b>5 կրեդիտ</b>
<b>Շաբաթական 4 ժամ</b>	<b>30/30/0</b>	
<b>VI կիսամյակ</b>	<b>Եզրափակիչ գնահատում</b>	
Դասընթացի նպատակն է տվյալների հենքերի նախագծման տեսական հիմունքների ուսումնասիրումը (տվյալների ներկայացման տարբեր մոդելները, ռելացիոն հանրահաշիվ, նորմալիզացայի սկզբունքները): Գործնական պարապմունքների ընթացքում ուսումնասիրվում է հարցումների SQL լեզուն:		
<b>Դասընթացի ավարտին ուսանողը կունենա,</b>		
<b>Գիտելիք և իմացություն</b>		
• տեսության և ռելացիոն հանրահաշվի հիմնական		

հասկացություններից,

- տվյալների ներկայացման հիմնական մոդելներից (E/R մոդել, ռելացիոն մոդել, օբյեկտային կողմնորոշված մոդել),

### **Ունակ կլինի**

#### **(բուն մասնագիտական կարողություններ)**

- անցնելու հիմնական մոդելների մեկից մյուսին,
- կատարելու հարցումներ SQL լեզվի միջոցներով,

#### **(ընդհանրական կարողություններ)**

- ծրագրավորման հմտություններ:

### **Համառոտ բովանդակությունը.**

**Թեմա 1.** Տվյալների հենքերի ղեկավարման համակարգերի հատկությունները, նրանց հիմնական կոմպոնենտները: Կլիենտ-սերվեր ճարտարապետություն: **Թեմա 2.** Տվյալների հենքերի մոդելավորումը և մոդելների տիպերը՝ E/R ռելացիոն, օբյեկտների կողմնորոշված, ցանցային, հիերարխիկ: **Թեմա 3.** Ռելացիոն հանրահաշիվ. ռելացիոն հանրահաշվի գործողությունները, հանրահաշվական արտահայտություն: **Թեմա 4.** Տվյալների ռելացիոն մոդելի հիմունքները: **Թեմա 5.** Ֆունկցիոնալ կախվածություններ: Ֆունկցիոնալ կախվածությունների կանոնները: **Թեմա 6.** Տվյալների ռելացիոն հենքերի նորմալացման տեսություն: **Թեմա 7.** Հարցումների SQL լեզու:

### **Գնահատման մեթոդներ և չափանիշները**

Ընթացիկ քննություններ

